

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

գործունեության վերաբերյալ

2017թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում

ԵՐԵՎԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ԱՄՓՈՓԱԳԻՐ	3
II. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	5
2.1 ՄՆՏՁ Ծրագիր, Բաղադրիչ 1. Միկրոծրագրերի նախապատրաստում	5
2.2 Հանրագումարային տվյալներ միկրոծրագրերի առաջարկների վերաբերյալ	6
2.3 Միկրոծրագրերի դասակարգումն ըստ խոցելիության	7
2.5 Միկրոծրագրերի փորձաքննություն	8
2.6 Միկրոծրագրերի հաստատում	8
2.7 Բնապահպանական և սոցիալական երաշխիքներ	9
2.8 Բողոքների լուծում	9
2.9 Գնումներ	9
2.10 Շինարարական աշխատանքների փուլում գտնվող միկրոծրագրեր	11
2.11 Ավարտված միկրոծրագրեր	11
2.12 ՄՆՏՁ-ի 2-րդ Բաղադրիչ. Ենթածրագրերի նախապատրաստում	13
2.13 Ուսուցում և մասնագիտական օժանդակություն (ՄՕ) ՄՆՏՁ-ի Ծրագրի շրջանակներում	13
2.13.1 Ուսուցում և մասնագիտական օժանդակություն ՄՆՏՁ-ի 1-ին Բաղադրիչի շրջանակներում	13
2.13.2 Ուսուցում և մասնագիտական օժանդակություն զարգացման ծրագրերի նախապատրաստման նպատակով	14
2.13.3 ՀՏՀ-ի աշխատակազմի ուսուցում	14
2.14 Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ	15
2.14.1 ԱԶԲ. ՍԱԲ Ծրագիր	15
2.14.2 ԱՄՆ ՄԶԳ. ՏԻԲ Ծրագիր	19
2.14.3 Շվեյցարական միջազգային համագործակցության դրամաշնորհային Ծրագիր	21
2.14.4 ՀԲ-ի Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացման Ծրագիր	22
III. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ	23
IV. ԳՈՐԾԱԴԻՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	25
V. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	26

- Հավելված 1 ՄՆՏՁ-ի միկրոծրագրերի ցանկն ըստ մարզերի (1 աղյուսակ)
- Հավելված 2 ՄՆՏՁ-ի ծրագրերի բնապահպանական դասակարգումը (2 աղյուսակ)
- Հավելված 3 ՏԻԲ դրամաշնորհային Ծրագրի ներքո իրականացվող ենթածրագրերի նկարագրությունը
- Հավելված 4 ՇՄՀԳ-ի դրամաշնորհի ներքո իրականացվող ենթածրագրերի նկարագրությունը
- Հավելված 5 ՄՆՏՁ-ի տարեկան և հանրագումարային ծախսերն ըստ ՄՆՏՁ-ի բաղադրիչների և ֆինանսավորման աղբյուրների

**Ուշադրություն.** Հաշվետվության մեջ “Համայնք” տերմինը գործածվում է որպես հիմնադրամի Ղեկավար ձեռնարկով սահմանված հասկացություն, որը միշտ չէ, որ համընկնում է վարչատարածքային սահմանման հետ:

## I ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշվետվության մեջ ընդգրկված է 2017թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏՀՀ) գործադիր գրասենյակի գործունեությունը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎՋՄԲ) վարկային միջոցների ֆինանսավորմամբ իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման (ՄՆՏՀ) Ծրագրի շրջանակներում: Ամփոփ տվյալներ են ներկայացվում նաև ԱՄՆ ՄՁԳ-ի Տեղական ինքնակառավարման բարեփոխումների (ՏԻԲ) Ծրագրի և ՄՆՏՀ-ի շրջանակներում Շվեյցարական միջազգային համագործակցության գրասենյակի (ՇՄՀԳ) դրամաշնորհային Ծրագրի, Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) վարկային միջոցներով իրականացվող Սեյսմիկ անվտանգության բարելավման (ՍԱԲ) ծրագրի և ՎՋՄԲ-ի Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման (ՏՏԵՀ) Ծրագրի ներքո հիմնադրամի իրականացված գործունեության վերաբերյալ:

Հաշվետու կիսամյակում ՄՆՏՀ Ծրագրի 1-ին բաղադրիչի ներքո հիմնադրամը 9 մարզերի շահառու համայնքներից ստացել է միկրոծրագրերի իրականացման 24 հայտեր, որոնք ըստ Ղեկավար ձեռնարկի ընթացակարգերի անցել են խթանման և նախնական փորձաքննության փուլերով, հայտատու համայնքներում կայացել են համայնքային ընդհանուր ժողովներ, ընտրվել են Ծրագրերի իրականացման կոմիտեներ: Բոլոր հայտերը փոխանցվել են վերջնական փորձաքննության փուլ, և դրանց համար պատվիրվել են նախագծեր: Հաշվետու ժամանակահատվածում հաստատվել են 5 միկրոծրագրեր, այդ համայնքների հետ կնքվել են 5 հիմնական համաձայնագրեր՝ 503.4 միլիոն (մլն) դրամ ընդհանուր գումարով: Միկրոծրագրերի շինաշխատանքների իրականացման համար մրցութային կարգով ընտրվել են կապալառուներ, և նրանց հետ կնքվել է 6 պայմանագիր՝ շուրջ 613.3 մլն դրամ ընդհանուր արժեքով:

2017թ. 1-ին կիսամյակում շինարարական աշխատանքներն ավարտվել են 5 միկրոծրագրերում՝ 647.9 մլն դրամ ընդհանուր արժեքով, որոնց շրջանակներում շինարարության ոլորտում ստեղծվել է շուրջ 12.4 հազար մարդ\*օր աշխատատեղ՝ շինաշխատանքներում ընդգրկվածների համար ապահովելով մոտ 105.6 մլն դրամ եկամուտ՝ համարժեք 218 հազար ԱՄՆ դոլարին (դոլար): 2017թ. հունիսի 30-ի դրությամբ շինարարության փուլում գտնվել են 37 միկրոծրագրեր:

ՄՆՏՀ-ի 2-րդ՝ Համայնքների զարգացմանը և միջհամայնքային զարգացման ծրագրերի իրականացմանն ուղղված բաղադրիչի շրջանակներում աշխատանքներ չեն իրականացվել: Սակայն այդ բաղադրիչի ընթացակարգերով ԱՄՆ-ի ՄՁԳ-ի դրամաշնորհի հաշվին իրականացվող Տեղական ինքնակառավարման բարեփոխումների Ծրագրի ներքո 13 խոշորացվող համայնքներում կատարվել են միջհամայնքային ծրագրերի նախապատրաստման աշխատանքներ և ձևավորվել են առաջարկներ: Կիսամյակի ավարտին Դիլիջանի, Թումանյանի, Տաթևի համայնքներում ծրագրերն գտնվել են իրականացման փուլում, Ամասիայի, Աշոցքի, Արփիի, Սարապատի, Ուրցաձորի և Վայքի ծրագրերը՝ նախագծային փուլում, Գորիսի, Նոյեմբերյանի, Այրումի և Կողբի ծրագրերը՝ նախնական փորձաքննության փուլում: Հաշվետու ժամանակահատվածում համայնքային ծառայությունների բարելավման և ընդլայնման նպատակով Դիլիջան, Տաթև, Թումանյան և Վայք համայնքներին հատկացվել է մեքենասարքավորում՝ աղբատար մեքենա, էքսկավատոր, ինքնաթափ, գրեյդեր, կոմբայն, տրակտոր և այլն:

Շվեյցարական միջազգային համագործակցության գրասենյակի (ՇՄՀԳ) դրամաշնորհային Ծրագրի շրջանակներում միջհամայնքային ենթածրագրերի նախապատրաստման աշխատանքներն ընթացել են Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի 5 խոշորացվող համայնքներում՝ Մեղրի, Տեղ, Գորայք, Ջերմուկ, Զառիթափ: Հունիսի 30-ի դրությամբ Տեղ համայնքի ծրագիրը նախնական փորձաքննության փուլում էր, մյուսները՝ նախագծային փուլում:

Հաշվետու կիսամյակում աշխատանքները շարունակվել են Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Սեյսմիկ անվտանգության բարելավման Ծրագրի շրջանակներում. ընտրվել են 8 դպրոցներ, դրանցից մեկում շինարարական աշխատանքները մեկնարկել են, 3-ը պայմանագրի կնքման փուլում են, 3-ը՝ մրցութային փուլում են, 1-ի համար նախագիծ է մշակվում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի (UNDP) միջոցների հաշվին:

2017թ. 1-ին կիսամյակի ընթացքում.

- ՄՆՏՀ Ծրագրի վարկային միջոցներից ստացվել է 1.71 մլն դոլար (համարժեք 826.9 մլն դրամին), ՀՀ կառավարության համաֆինասավորման մասով՝ 256.8 մլն դրամ (530 հազար դոլար): Ընդհանուր ծախսը կազմել է մոտ 895.9 մլն դրամ (1.85 մլն դոլար):

- ՍԱԲ Ծրագրի վարկային միջոցներից գումար չի ստացվել, ՀՀ կառավարության համաֆինասավորման մասով ստացվել է 169.2 մլն դրամ (349.8 հազար դոլար )։ Ընդհանուր ծախսը կազմել է շուրջ 209.74 մլն դրամ (433.7 հազար դոլար)։
- ՏՏԵԶ Ծրագրի վարկային միջոցներից ստացվել է 100 հազար դոլար (48.5 մլն դրամ), ՀՀ կառավարության համաֆինասավորման մասով՝ 3.9 մլն դրամ (8,023 դոլար )։ Ընդհանուր ծախսը կազմել է ավելի քան 10.2 մլն դրամ (21.09 հազար դոլար)։
- ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհի հատուկ հաշիվը լրացվել է 1.21 մլն դոլար գումարով (584.5 մլն դրամ)։ Կիսամյակային ծախսը կազմել է շուրջ 520.1 մլն դրամ (1.07 մլն դոլար)։
- ՇՄՀԳ-ի դրամաշնորհի հատուկ հաշիվը լրացվել է 300 հազար դոլար գումարով (145.3 մլն դրամ)։ Կիսամյակային ծախսը կազմել է ավելի քան 1.8 մլն դրամ (3.7 հազար դոլար)։
- Համայնքների դրամական ներդրումների հաշվին ստացվել է 119.2 մլն դրամ (246.82 հազար դոլար), որից.
  - ՄՆՏԶ-ի 1-ին բաղադրիչով՝ 90.9 մլն դրամ (188.3 հազար դոլար),
  - ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրով՝ 16.8 մլն դրամ (34.6 հազար դոլար),
  - ՇՄՀԳ-ի դրամաշնորհային ծրագրով՝ 11.6 մլն դրամ (24 հազար դոլար)։

Հաշվետու ժամանակահատվածում ՄՆՏԶ-ի 1-ին բաղադրիչի միկրոծրագրերով կատարված շինարարական աշխատանքների դիմաց համայնքների ներդրումների աղբյուրից վճարվել է 48.5 մլն դրամ (100.07 հազար դոլար)։

Հաշվետու կիսամյակի ընթացքում ՄՆՏԶ Ծրագրով պլանավորված 2.11 մլն դոլարի դիմաց իրականացրել է 1.85 դոլարի աշխատանքներ, կիսամյակային պլանը կատարելով 88 տոկոսով, իսկ շինարարական աշխատանքների գծով կիսամյակային ընդհանուր պլանը կատարվել է 95 տոկոսով։

Ստորև Տարածքային զարգացման հիմնադրամի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում ներկայացվում է ավելի հանգամանորեն։

## II. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

### 2.1 ՄՆՏՁ Ծրագիր, Բաղադրիչ 1. Միկրոծրագրերի նախապատրաստում

ՄՆՏՁ Ծրագրի 1-ին բաղադրիչի շրջանակներում իրականացվում են անապահով համայնքների առաջնային հիմնական կարիքների բավարարմանն ուղղված միկրոծրագրեր՝ համայնքների կողմից ներկայացրած հայտերի ու միկրոծրագրերի առաջարկների և դրանց երկաստիճան փորձաքննության հիման վրա:

**Միկրոծրագրերի հայտեր.** Միկրոծրագրի իրականացման հայտը ներառում է ՄՆՏՁ Ծրագրում մասնակցության վերաբերյալ համայնքի որոշումը, տեղեկություններ շահառուների առաջնահերթ կարիքների բացահայտմանն ուղղված միջոցառումների մասին, համայնքի համար գերակայություն համարվող ենթակառուցվածքի ընտրությունը և նկարագրությունը, համայնքի՝ ներդրում կատարելու պատրաստակամությունը և ավագանու պարտավորությունը՝ համայնքի բյուջեում շահագործման և պահպանման համար անհրաժեշտ միջոցները ներառելու վերաբերյալ: Հայտին կցվում է համայնքի բնակչության հետ առաջնային խնդիրների քննարկումների նկարագրությունը և արդյունքները, դրանց հիման վրա կայացված համայնքի ավագանու որոշումը:

Հայտերն ստուգվում են բացառող չափանիշների առումով: Որևէ բացառող չափանիշի առկայության դեպքում հայտը մերժվում է, այլապես գործադիր կոմիտեի որոշմամբ փոխանցվում է փորձաքննության բաժին՝ նախնական փորձաքննության համար: Այնուհետև, ընտրված հայտատու համայնքներում խթանող ինժեներների մասնակցությամբ կազմակերպվում է տեղեկատվական քարոզարշավ: Ըստ ՄՆՏՁ-ի ընթացակարգի, հրավիրվում է համայնքի ընդհանուր ժողով, որտեղ համայնքի անդամներին հանգամանորեն ներկայացվում է ՄՆՏՁ Ծրագիրը և ընթացակարգերը, հաստատվում է համայնքի ներդրման մասին որոշումը, և ընտրվում է ծրագրի իրականացման կոմիտե (ԾԻԿ), որին համայնքի ընդհանուր որոշմամբ տրվում համայնքը ներկայացնելու լիազորություն: ԾԻԿ-ի առաջին նիստը տեղի է ունենում համայնքի ընդհանուր ժողովից անմիջապես հետո, որի ընթացքում ընտրվում է նախագահ, և ՀՏՀ-ի աշխատակիցները ԾԻԿ-ի անդամներին իրազեկում են կոմիտեի գործառույթների մասին (կոմիտեն մասնակցում է կապալառուների ընտրության, շինարարական աշխատանքների վերահսկման աշխատանքներին, ինչպես նաև համայնքին տեղեկություններ են ներկայացնում միկրոծրագրի առաջընթացի վերաբերյալ) և ներկայացնում հայտի մշակման հետագա քայլերը:

Հաշվետու ժամանակահատվածում ընթացքում 9 մարզերի շահառու համայնքներից միկրոծրագրերի իրականացման 24 հայտեր են ստացվել, որոնք Աղյուսակ 1-ում ներկայացված են ըստ մարզերի և տեսակի:

**Աղյուսակ 1. 2017թ. 1-ին կիսամյակում ստացված հայտերն ըստ մարզերի և տեսակի**

Մարզ	Մանկա-պարտեզ	Դպրոց	Խմելու ջուր	Համայնքի կենտրոն	Մասնագիտ. դպրոց	Ոռոգման ջուր	Ընդամենն ըստ մարզի
Արագածոտն	2			1			3
Արարատ	3	1					4
Արմավիր	1						1
Լոռի		1		1			2
Կոտայք						1	1
Շիրակ	3	2			1		6
Սյունիք	1			1			2
Տավուշ			1	1			2
Վայոց Ձոր	1		2				3
<b>Ընդամենը</b>	<b>11</b>	<b>4</b>	<b>3</b>	<b>4</b>	<b>1</b>	<b>1</b>	<b>24</b>

2017թ. հունիսի 30-ի դրությամբ ՄՆՏՁ-ի բոլոր միկրոծրագրերի ցանկն ըստ իրականացման փուլերի ներկայացված է սույն հաշվետվության Հավելված 1-ում:

**Համայնքային ընդհանուր ժողովներ.** ՄՆՏՁ-ի 1-ին բաղադրիչի ներքո իրականացվող միկրոծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկությունը (հայտի գեներացումից մինչև ծրագրի վերջնական հաստատումը) համայնքների բնակչությանը և ՏԻՄ-երին հասանելի դարձնելու համար կազմակերպվում են համայնքային երեք ընդհանուր ժողովներ:

- Առաջին ժողովում համայնքի ֆորմալ և ոչ ֆորմալ ղեկավարների, համայնքում գործող կազմակերպությունների, դպրոցների, խոցելի խմբերի և բիզնեսի ներկայացուցիչների և լայն հասարակայնության մասնակցությամբ, որոշում է կայացվում ՄՆՏԶ Ծրագրին մասնակցության վերաբերյալ, քննարկվում են կարևոր համայնքային խնդիրները, բացահայտվում է դրանցից առաջնահերթը, և ավագանին պատրաստում և հիմնադրամի գործադիր գրասենյակ է ներկայացնում մասնակցության հայտ: Հաշվետու կիսամյակի ընթացքում այս ժողովներին մասնակցել է միջինում 72 հոգի (կանայք կազմել են 56.6%-ը):

- Երկրորդ ժողովը գումարվում է փորձաքննության նախնական փուլից հետո՝ համայնքին միկրոծրագրի վերաբերյալ մանրամասնորեն իրազեկելու նպատակով, և համոզվելու համար, որ նախորդ ժողովում համայնքի բնակչությունն ազատորեն քննարկել է բոլոր խնդիրները, քննարկումների արդյունքում հաստատվել է տեղական ներդրման մասին որոշումը, և ընտրվել է ԾԻԿ: Միջինում նման ժողովների մասնակցել է 76 հոգի (որից 62.3%-ը՝ կանայք):

- Երրորդ ժողովը գումարվում է փորձաքննության 2-րդ փուլից հետո, որտեղ հիմնադրամի աշխատակցի հետ համատեղ ԾԻԿ-ի նախագահը ներկայացնում է միկրոծրագրի վերջնական նախագիծը, համայնքից ակնկալվող ներդրումը: Այս ժողովը նաև բնակչության կողմից նախագծի վերաբերյալ հարցեր տալու կամ դիտողություններ անելու հնարավորություն է ապահովում: Նման ժողովներում միջին մասնակցությունը եղել է 50 հոգի (62%-ը կանայք):


**Աղյուսակ 2. Տվյալներ ժողովների մասին**

ժողով	Թիվը	Մասնակիցների թիվը	Այդ թվում՝ կանայք	
			Թիվը	%
I ժողով	24	1,732	981	56.6%
II ժողով	24	1,813	1,129	62.3%
III ժողով	6	297	184	62.0%

Աղյուսակ 2-ում ներկայացված են ամփոփ տվյալներ հաշվետու կիսամյակում կայացած ժողովների մասնակցության վերաբերյալ:

**2.2 Հանրագումարային տվյալներ միկրոծրագրերի առաջարկների վերաբերյալ**

ՄՆՏԶ Ծրագրի շրջանակներում ստացված միկրոծրագրերի բաշխումն ըստ իրականացման փուլի՝ 2017թ. հունիսի 30-ի դրությամբ, բերված է Աղյուսակ 3-ում: Դրանց տեսականին պատկերված է Նկ. 1-ում, իսկ բաշխումն ըստ մարզերի և բնակավայրերի տեսակի ամփոփ ներկայացված է Աղյուսակ 4-ում:



**Աղյուսակ 3. ՄՆՏԶ-ի միկրոծրագրերի բաշխումն ըստ իրականացման փուլի**

Փուլը	Քանակը
Ավարտված	24
Շինաշխատանքներ	37
Գնումներ	8
Նախագծային փուլ	17
Փորձաքննություն	24

**Աղյուսակ 4. Միկրոծրագրերն ըստ մարզերի և բնակավայրի տիպի**

Մարզ	Հայտեր	Քաղաք	Գյուղ
Արագածոտն	11	3	8
Արմավիր	10	0	7
Արարատ	7	0	10
Գեղարքունիք	11	3	8
Կոտայք	11	2	6
Լոռի	17	7	4
Շիրակ	8	2	15
Սյունիք	14	2	12
Տավուշ	7	2	12
Վայոց Ձոր	14	0	7
<b>Ընդամենը</b>	<b>110</b>	<b>21</b>	<b>89</b>

**2.3 Միկրոծրագրերի դասակարգումն ըստ խոցելիության**

ՄՆՏԶ Ծրագրի նախապատրաստման շրջանում իրականացված հետազոտության արդյունքներով, Հայաստանի բոլոր համայնքները (բացառությամբ Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների) ուսումնասիրվել և ըստ խոցելիության դասակարգվել են 3 դասերի՝ “խիստ խոցելի”, “խոցելի” և “նվազ խոցելի”։ ՄՆՏԶ Ծրագրով 1-ին բաղադրիչով պահանջվում է վարկային միջոցների առնվազն 40%-ն օգտագործել “խիստ խոցելի” դասի համայնքների ծրագրերի համար, և 20%-ից ոչ ավել՝ “նվազ խոցելի” համայնքներում։ Աղյուսակ 5-ում ամփոփ տվյալներ են ներկայացվում միկրոծրագրերի արժեքների բաշխման վերաբերյալ ըստ համայնքների խոցելիության խմբերի։

**Աղյուսակ 5. ՄՆՏԶ-ի 1-ին բաղադրիչի միկրոծրագրերի բաշխումն ըստ խոցելիության**


Խոցելիության խումբ	Խոցելիության ինդեքսի տիրույթ		Հայտերի թիվը *	Ընդհանուր արժեքը, դրամ	Տոկոսը	Սահմանված տոկոսը
խիստ խոցելի	0.456	0.950	41	5,275,123,185	37.7%	Առնվազն 40%
խոցելի	0.276	0.455	57	7,704,208,066	55.1%	
Նվազ խոցելի	0.050	0.275	9	994,607,065	7.1%	Ոչ ավել 20%-ից

\* Գյումրիից և Վանաձորից ստացված 3 հայտերը հաշվի չեն առնվել։

Նկ. 2-ում բերված են ՄՆՏԶ Ծրագրի 1-ին բաղադրիչի շրջանակներում միկրոծրագրի մի շահառուին ընկնող միջին արժեքներն ըստ խոցելիության խմբերի։

Ակնհայտորեն, “խիստ խոցելի” և ”խոցելի” համայնքներում մի շահառուի հաշվարկով անհամեմատ շատ ավելի գումար է ներդրվել՝ համապատասխանաբար՝ 103 հազար և 49 հազար դրամ (համարժեք մոտ 214 և 101 դոլարին), քան թե “նվազ խոցելի” համայնքներում՝ 24 հազար դրամ (կամ 50 դոլար)։

Սա վկայում է ՄՆՏԶ-ի միջոցների՝ առավել կարիքավոր դասին ուղղված լինելու մասին։



Նկ. 2 Մի շահառուին ընկնող ծախսն ըստ խոցելիության խմբերի, դրամ

**Լրատվություն.** Հաշվետու կիսամյակի ընթացքում Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի Արագածոտնի, Շիրակի, Կոտայքի, Լոռու և Տավուշի մարզերի 24 համայնքներում կազմակերպվել են հանդիպումներ մարզային ղեկավարների, միջազգային դոնոր կազմակերպությունների, ՀՏՀ-ի աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվել են հիմնադրամի գործունեությանն ու հետագա ծրագրերի իրականացմանն առնչվող բազմաթիվ հարցեր: Այդ հանդիպումները լուսաբանվել են 24 ռեպորտաժներով՝ հեռուստատեսությամբ, ռադիոյով, տպագիր մամուլով և էլեկտրոնային կայքերով: ՀՀ վարչապետի և Տարածքային կառավարման և զարգացման նախարարի մասնակցությամբ մի շարք հանդիպումներ և շրջայցեր են կազմակերպվել 8 մարզերի համայնքներ, որոնց մասին մարզային և տեղական հեռուստաընկերությունների էթերներով, 46 հեռուստահաղորդումներ են հեռարձակվել, տեղեկատվություն է տարածվել տպագիր և էլեկտրոնային մամուլով: ՀՏՀ-ի գործադիր տնօրենի հետ հարցազրույցներ են տպվել «Վարկանիշ» ամսագրում և «Հրապարակ» օրաթերթում:

## 2.5 Միկրոծրագրերի փորձաքննություն

Փորձաքննության աշխատանքները կազմակերպվում են երկու փուլով՝ նախնական և վերջնական: Նախնական փուլում գրասենյակում կատարվում է միկրոծրագրերի հայտերի ստուգում, այնուհետև տեղանքի այցելությունների հիման վրա մշակվում է աշխատանքների ցանկը և պատրաստվում է ծախսերի նախնական նախահաշիվը: Եթե բացառող չափանիշների առումով ընդունելի միկրոծրագրերի ընդհանուր արժեքը չի գերազանցում մարզին և տվյալ խոցելիության աստիճանի խմբին նախապես հատկացված ֆինանսական միջոցների չափը՝ հայտերը ներկայացվում են գործադիր կոմիտեի հաստատմանը: Այլապես, հայտերը դասակարգվում են ըստ ՀՏՀ-ի գնահատման չափանիշների, որի արդյունքում բարձր միավորներ ստացած հայտերը ներկայացվում են գործադիր կոմիտեի հաստատմանը, իսկ մնացածները մերժվում են: Եթե հայտերի ընդհանուր գումարը գերազանցում է մարզին և/կամ խոցելի համայնքների խմբին հատկացված միջոցները, ապա հայտերը գնահատվում են ըստ աշխարհագրական, սոցիալական, տնտեսական, բնապահպանական և տեխնիկական չափանիշների: Բարձր գնահատական ստացած հայտերը Գործադիր կոմիտեի կողմից ընտրվում են և փոխանցվում են փորձաքննության 2-րդ՝ նախագծային փուլ:

Հաշվետու կիսամյակի ավարտին նախնական փորձաքննության փուլում են գտնվում են 24 միկրոծրագրեր:

**Նախնական համաձայնագրեր.** Հաշվետու կիսամյակում փորձաքննության նախնական փուլն անցած միկրոծրագրերի համար ըստ կարգի կնքվել են նախնական համաձայնագրեր, որով նկարագրվում են միկրոծրագրի նախապատրաստման և իրականացման հետագա քայլերը և սահմանվում է համայնքային ներդրման առաջին մասնաբաժինը (որպես կանոն՝ ամբողջ ներդրման 50%-ը):

Հաշվետու կիսամյակում կնքվել են 23 նախնական համաձայնագրեր՝ շուրջ 2.68 մլրդ դրամ ընդհանուր գումարով (համարժեք շուրջ 5.52 մլն դոլարին): 2017թ. հունիսի 30-ի դրությամբ կնքված բոլոր նախնական համաձայնագրերի թիվը 108-ն է՝ 14.2 մլրդ ընդհանուր արժեքով (համարժեք շուրջ 29.3 մլն դոլարին):

**Փորձաքննության 2-րդ փուլում** վերջնականապես ճշտվում են նախատեսվող աշխատանքների բնույթը և ծավալները, ենթակառուցվածքի կայունության ապահովման մեխանիզմները, գնահատվում է միկրոծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցությունը, գնահատվում ու վերջնականացվում են շահագործման և պահպանման ծախսերը, պատվիրվում է նախագիծ, նախագծի համալիր փորձաքննություն և այլն:

Հաշվետու կիսամյակում փորձաքննության 2-րդ փուլ են անցել հիմնադրամի ստացած 5 միկրոծրագրեր, որոնց համար պատվիրվել են նախագծեր: Հունիսի 30-ի դրությամբ նախագծային փուլում են գտնվում 17 միկրոծրագրեր:

Նախագծի վերջնական ներկայացումից հետո կազմվում է միկրոծրագրի վերջնական փորձաքննության հաշվետվությունը, որտեղ նկարագրվում են նախատեսվող հիմնական աշխատանքները, միկրոծրագրի վերջնական բյուջեն, շինարարական աշխատանքների և սարքավորման տեխնիկական ցուցանիշները, անհրաժեշտության դեպքում շրջակա միջավայրի պահպանման և բարելավման համար նախատեսվող միջոցառումները: Վերջնական փորձաքննությունն անցած միկրոծրագրերը ենթակա են հաստատման հիմնադրամի Գործադիր կոմիտեի կողմից:

## 2.6 Միկրոծրագրերի հաստատում

Միկրոծրագրի հաստատման մասին Գործադիր կոմիտեի որոշումը ուժի մեջ է մտնում համայնքում 3-րդ ժողովն անցկացնելուց և համապատասխան արձանագրությունը ստանալուց հետո: Այն միկրոծրագրերը,



որտեղ հիմնադրամի մասնաբաժինը (ՀԲ Վարկի, կառավարության համաֆինանսավորման միջոցները և համայնքի ներդրումը) գերազանցում է 330 հազար դոլարի դրամային համարժեքը, ներկայացվում են ՀՏՀ-ի Խորհրդի և ՀԲ-ի հաստատմանը: Խորհուրդը միկրոծրագրի հաստատման մասին որոշում է ընդունում հարցման կարգով, որի համար ըստ Ղեկավար ձեռնարկի սահմանված է 7 օր ժամանակ: Եթե յոթօրյա ժամկետում դիտողություններ կամ մերժման մասին պատասխան չի տալիս, ապա միկրոծրագիրը համարվում է հաստատված և ուղարկվում է Համաշխարհային բանկ՝ համաձայնության:

Հաշվետու կիսամյակում ՄՆՏՀ-ի 1-ին բաղադրիչով հաստատվել են 5 միկրոծրագրեր, որոնցից 1-ը ներկայացվել են ՀՏՀ-ի Խորհրդի և ՀԲ-ի հաստատմանը, մնացածները ներկայացվել են Խորհրդին՝ տեղեկատվության կարգով:

**Հիմնական համաձայնագրեր.** Միկրոծրագրի վերջնական հաստատումից հետո ԾԻԿ-ի հետ կնքվում է հիմնական համաձայնագիր, որը կանոնակարգում է միկրոծրագրի իրականացման ամբողջ ընթացքը: Հաշվետու ժամանակահատվածում կնքվել են 5 հիմնական համաձայնագրեր՝ մոտ 503.4 մլն դրամ ընդհանուր գումարով (համարժեք 1.04 մլն դոլարին): Հունիսի 30-ի դրությամբ կնքված բոլոր հիմնական համաձայնագրերի թիվը 71-ն է՝ 9.6 մլրդ ընդհանուր արժեքով (համարժեք շուրջ 19.8 մլն դոլարին):

## 2.7 Բնապահպանական և սոցիալական երաշխիքներ

2017թ. 1-ին կիսամյակում ՄՆՏՀ-ի 23 միկրոծրագրեր անցել են նաև բնապահպանական և սոցիալական փորձաքննություն, որոնցից 11-ը դասվել են “B” կատեգորիայի, 12-ը՝ “C” (տես Հավելված 2): Ըստ կարգի կազմվել են բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ, դրանք հրապարակվել են հիմնադրամի կայքում, ներկայացվել են ՀԲ-ին, այնուհետև միկրոծրագրերի համայնքներում հայտարարվել և անցկացվել են հանրային քննարկումներ:

## 2.8 Բողոքների լուծում

Սոցիալական երաշխիքների ապահովման շրջանակներում գործում է ՀՏՀ-ի բողոքների ստացման համակարգը: Բացվել է առանձին էլեկտրոնային հասցե (support@atdf.am), ՀՏՀ-ի համացանցային կայքում ներդրվել է բողոքների առցանց գրանցման համակարգ՝ <http://atdf.am/hy/Home/ContactUs>, որտեղ ներկայացված են բողոքարկման մեխանիզմները և ընթացակարգերը, բողոքարկման գծով պատասխանատու աշխատակցի կոնտակտային տվյալները: Ե՛վ էլեկտրոնային փոստով ուղարկվող բողոքների, և՛ առցանց լրացված բողոքների դեպքում բողոքարկողը ստանում է ծանուցող նամակ, որտեղ նշված են բողոքների լուծման և ծանուցման համար սահմանված ժամկետները և բողոքարկման գծով աշխատակցի կոնտակտային տվյալները: Հստակեցվել են հիմնադրամի՝ բողոքները համակարգող մասնագետի կողմից բողոքների գրանցամատյանի վարման սկզբունքները:

Բոլոր միկրոծրագրերի համար տեղական համակարգողների ցանկը հրապարակվել հիմնադրամի կայքում, ներառելով 109 տեղական համակարգողներ: Նրանց ներկայացվել է ուղեցույց բողոքների լուծման մեխանիզմների վերաբերյալ, որտեղ նկարագրված են բողոքների լուծման մանրամասները, համակարգողների պարտականությունները և բողոքների փաստաթղթավորման ընթացակարգերը: Համայնքներին են փոխանցվել տեղեկատվական վահանակներ, որտեղ նշված են բողոքների լուծման շրջանակներում գործող կոնտակտային տվյալները: ՏԻՄ-երը վահանակները փակցրել են հանրային տեսանելի վայրերում, դրանց վրա պարբերաբար հայտարարություններ ներկայացնելով միկրոծրագրի ընթացքի վերաբերյալ:

Հաշվետու կիսամյակի ընթացքում շահառուներից բողոքի որևէ դիմում չի ներկայացվել տեղական համակարգողներին: Ստացվել է 11 դիմում (5 հեռախոսազանգ և 6 էլեկտրոնային նամակ), որոնք վերաբերվել են գնումներին, շինաշխատանքներին, ՀՏՀ-ի աշխատակիցների հետ արագ կապ հաստատելուն, հիմնադրամի կայքում տեղադրված հայտարարություններին և այլն: Այդ դիմումները գրանցվել են, ուղղորդվել համապատասխան բաժիններ, դրանց տրվել է համապատասխան արձագանք: Չի արձանագրվել որևէ բողոք՝ առնչվող ծրագրերի իրականացմանը:

## 2.9 Գնումներ

ՄՆՏՀ-ի Բաղադրիչ 1-ի ներքո միկրոծրագրերի շինարարական աշխատանքների գնումները կատարում են ԾԻԿ-երը՝ ՀՏՀ-ի աշխատակիցների կողմից մասնագիտական օժանդակության տրամադրմամբ և նրանց

վերահսկողության ներքո: Համայնքից պահանջվող ներդրումը ստանալուց հետո մեկ շաբաթվա ընթացքում սկսվում է շինարարական աշխատանքների գնումների գործընթացը. հայտարարվում է մրցույթ, ներկայացված հայտերը գնահատվում են ըստ սահմանված չափանիշների, որոշվում է հաղթողը, և կնքվում է պայմանագիր: Այս բաղադրիչի շրջանակներում ապրանքները և խորհրդատվական ծառայությունները ձեռք են բերվում Գնումների բաժնի կողմից:

Հաշվետու կիսամյակում մրցույթով ընտրվել են 6 շինարարական կազմակերպություններ և կնքվել են պայմանագրեր՝ 613.3 մլն դրամ ընդհանուր արժեքով (համարժեք 1.27 մլն դոլարին):

**Հանրագումարային տվյալներ գնումների վերաբերյալ.** Աղյուսակ 6-ում ամփոփ ներկայացվում են հիմնադրամի կատարած բոլոր գնումները, որոնք վերաբերվում են միկրոծրագրերի համար նախագծման, վերահսկման, հատուկ փորձաքննական ծառայություններին և շինարարական կազմակերպություններին՝ առ 2017թ. հունիսի 30-ը:

**Աղյուսակ 6. ՄՆՏԶ Ծրագրի բոլոր գնումները 2017թ. հունիսի 30-ի դրությամբ**

Պայմանագիր	Քանակ	Արժեքը, դրամ	Արժեքը, դոլար	Տոկոս
Շինարարական աշխատանքներ	61	6,896,103,382	14,361,655	90.70%
Նախագծման ծառայություններ	23	347,009,120	724,015	4.56%
Տեխնիկական վերահսկման ծառայություններ	6	148,756,611	312,114	1.96%
Կահույքի մատակարարում մարզերի դպրոցների մանկապարտեզների և համայնքային կենտրոնների համար	2	83,693,900	174,431	1.10%
ՀՏՀՀ-ի համար ավտոմեքենաների գնում	2	46,175,000	96,637	0.61%
Տեխնիկական էքսպերտների ծառայություններ	7	36,295,676	75,318	0.48%
Նախագծերի հեղինակային հսկողություն	11	21,971,344	45,582	0.29%
Նախագծերի պետական փորձաքննություն	1	8,510,736	17,940	0.11%
Փորձագիտական ծառայություններ	1	5,751,045	12,157	0.08%
ՀՏՀՀ-ի համար համակարգչային տեխնիկա	1	4,603,240	9,632	0.06%
ՀՏՀՀ-ի համար կահույքի գնում	1	4,498,800	9,416	0.06%

**Կահույքի/գույքի մատակարարում.** ՄՆՏԶ-ի 1-ին բաղադրիչով նախատեսվում է վերականգնված սոցիալական ենթակառուցվածքների կահավորում: Բացի հիմնադրամի միկրոծրագրերում ընդգրկված ենթակառուցվածքներից, կահույքի մատակարարում հնարավոր է համանման այլ ենթակառուցվածքներին՝ մարզպետարանների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: ՄՆՏԶ-ի 2-րդ բաղադրիչով նույնպես կահույքի/գույքի մատակարարում կարող է լինել:

Հաշվետու կիսամյակում կահույքի մատակարարման վերաբերյալ պայմանագիր չի կնքվել:

**Հանրագումարային տվյալներ կահույքի/գույքի մատակարարման վերաբերյալ.** Առ 2017թ. հունիսի 30-ը՝

- ՄՆՏԶ-ի 1-ին բաղադրիչի ներքո կնքվել է միկրոծրագրերի համար կահույքի ձեռքբերման 2 պայմանագիր՝ 83.69 մլն դրամ ընդհանուր արժեքով (համարժեք 174,249 դոլարին), ըստ որոնց 8 մարզերի 21 համայնքներին (այդ թվում՝ 7 դպրոց, 8 մանկապարտեզ, 4 համայնքային և մշակութային կենտրոն, մեկական գեղարվեստի դպրոց և առողջապահական կենտրոն) 3,908 միավոր կահույք է մատակարարվել:
- ՄՆՏԶ-ի 3-րդ բաղադրիչի ներքո՝ ՀՏՀՀ-ի գրասենյակի համար կահույք է գնվել մի պայմանագրով՝ 4.5 մլն դրամ (9,416 դոլար) արժեքով:

## 2.10 Շինարարական աշխատանքների փուլում գտնվող միկրոծրագրեր


Միկրոծրագրերի շինաշխատանքների վերահսկումը կատարվում է հիմնադրամի վերահսկիչ ինժեների, նախագծողի և տեխնիկական հսկիչի կողմից: Նախագծողն իրականացնում է հեղինակային հսկողություն, իսկ տեխնիկական հսկիչը պատասխանատու է շինաշխատանքների ամենօրյա վերահսկման համար, ապահովելով նաև համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին և Համաշխարհային Բանկի երաշխիքային քաղաքականություններին:

Հաշվետու կիսամյակի ավարտի դրությամբ շինարարական աշխատանքների փուլում են եղել 37 միկրոծրագրեր՝ 5.66 մլրդ դրամ ընդհանուր արժեքով (համարժեք 11.7 մլն դոլարին): Աղյուսակ 7-ում ամփոփ տվյալներ են ներկայացվում ըստ ընթացիկ ծրագրերի տեսականու:

Աղյուսակ 7. Ընթացիկ միկրոծրագրերի ամփոփ տվյալներն ըստ տեսականու

Տեսակ	Թիվ	% ըստ թվի	Ընդհանուր արժեքը, դրամ	% ըստ ծրագրի արժեքի	Պայմանագրի արժեքը, դրամ	Շահառու	% ըստ շահառուի թվի
Մանկապարտեզ	19	51.4%	3,488,387,017	61.6%	3,011,325,026	45,903	50.5%
Խմելու ջուր	7	18.9%	460,203,802	8.1%	414,042,702	8,094	8.9%
Դպրոց	5	13.5%	955,478,752	16.9%	834,139,424	5,960	6.6%
Համայնքի կենտրոն	3	8.1%	378,210,831	6.7%	299,101,166	17,311	19.0%
Մասնագիտական դպրոց	2	5.4%	190,500,664	3.4%	156,430,389	918	1.0%
Առողջապահական	1	2.7%	187,988,602	3.3%	154,994,689	12,800	14.1%
<b>Ընդամենը</b>	<b>37</b>	<b>100%</b>	<b>5,660,769,668</b>	<b>100%</b>	<b>4,870,033,397</b>	<b>90,986</b>	<b>100%</b>

Նկ. 3 ՄՆՏՁ-ի 1-ին բաղադրիչի ներքո ընթացիկ ծրագրերի բաշխումն ըստ կատարման աստիճանի, 2017թ. հունիսի 30-ի դրությամբ



Նկ. 3-ում պատկերված է միկրոծրագրերի բաշխումն ըստ շինաշխատանքների կատարման աստիճանի:

2017թ. հունիսի 30-ի դրությամբ ընթացիկ միկրոծրագրերով կատարվել են ավելի քան 2.32 մլրդ դրամի աշխատանքներ, որոնց շրջանակներում ստեղծվել է շուրջ 44.5 հազար մարդ\*օր աշխատատեղ, շինարարական աշխատանքներում ընդգրկվածների համար ապահովվելով մոտ 378 մլն դրամի եկամուտ (համարժեք մոտ 787 հազար դոլարին):

## 2.11 Ավարտված միկրոծրագրեր


2017թ. 1-ին կիսամյակում շինարարական աշխատանքներն ավարտվել են ՄՆՏՁ-ի 1-ին բաղադրիչի իրականացվող 5 միկրոծրագրերում. դրանցից մեկը խմելու ջրի ծրագիր է, մյուսները՝ մանկապարտեզ: Ավարտված մի միկրոծրագրի միջին արժեքը կազմել է 129.6 մլն դրամ (կամ 267 հազար դոլար), շինարարական աշխատանքների միջին տևողությունը՝ 12.9 ամիս: Շահառուների ընդհանուր թիվը կազմել է 10,398 մարդ. մի շահառուին ընկնող միջին արժեքը կազմում է 62 հազար դրամ կամ 128 դոլար: Աղյուսակ 8-ում ներկայացվում են ամփոփ տվյալներ ըստ հաշվետու կիսամյակում ավարտված ծրագրերի տեսականու:

**Աղյուսակ 8. Ամփոփ տվյալներ 2017թ. 1-ին կիսամյակում ավարտված միկրոծրագրերի վերաբերյալ**

Տեսակ	N	% ըստ թվի	Միկրոծրագրի արժեքը, դրամ	% ըստ ծրագրի արժեքի	Պայմանագրի արժեքը, դրամ	Շահառու	% ըստ շահառուի թվի
Մանկապարտեզ	4	80	596,247,608	92%	542,441,788	8,864	85.2%
Խմելու ջուր	1	20%	51,614,934	8%	47,270,219	1,534	14.8%
<b>Ընդամենը</b>	<b>5</b>	<b>100%</b>	<b>647,862,542</b>	<b>100%</b>	<b>589,712,007</b>	<b>10,398</b>	<b>100%</b>

**Հանրագումարային տվյալներ ավարտված միկրոծրագրերի վերաբերյալ.** 2017թ. հունիսի 30-ի դրությամբ ՄՆՏԶ-ի 1-ին բաղադրիչի ներքո ավարտված միկրոծրագրերը 25-ն են: Ավարտված մի միկրոծրագրի միջին արժեքը կազմել է 90.77 մլն դրամ (կամ մոտ 187 հազար դոլար), շինարարական աշխատանքների միջին տևողությունը՝ 8.3 ամիս: Շահառուների ընդհանուր թիվը կազմել է ավելի քան 65 հազար մարդ: Մի շահառուին ընկնող միջին արժեքը կազմում է մոտ 35 հազար դրամ կամ 72 դոլար:

Նկ. 4-ում և Աղյուսակ 9-ում ներկայացվում են ամփոփ տվյալներ ըստ ՄՆՏԶ-ի բոլոր ավարտված ծրագրերի տեսականու:



**Նկ. 4 ՄՆՏԶ-ի 1-ին բաղադրիչով 2017թ. հունիսի 30-ի դրությամբ ավարտված ծրագրերի տեսականին**

**Աղյուսակ 9. Ամփոփ տվյալներ ՄՆՏԶ-1 Բաղադրիչի ավարտված միկրոծրագրերի վերաբերյալ, առ 30.06.2017թ.**

Տեսակ	N	% ըստ թվի	Միկրոծրագրի արժեքը, դրամ	Պայմանագրի արժեքը, դրամ	% ըստ ծրագրի արժեքի	Շահառուներ	% ըստ շահառուի թվի
Մանկապարտեզ	12	48.0%	1,334,832,882	1,203,824,393	58.8%	23,830	36.5%
Խմելու ջուր	5	20.0%	283,358,901	256,471,379	12.5%	4,950	7.6%
Դպրոց	4	16.0%	391,447,658	366,892,086	17.3%	4,959	7.6%
Առողջապահական	2	8.0%	100,431,912	90,086,709	4.4%	6,415	9.8%
Համայնքի կենտրոն	2	8.0%	159,137,026	146,810,293	7.0%	25,120	38.5%
<b>Ընդամենը</b>	<b>25</b>	<b>100.0%</b>	<b>2,269,208,380</b>	<b>2,064,084,860</b>	<b>100.0%</b>	<b>65,274</b>	<b>100.0%</b>

Ավարտված 25 միկրոծրագրերի շինարարական պայմանագրերի շրջանակներում ստեղծվել է շուրջ 39.6 հազար մարդ\*օր աշխատատեղ, շինաշխատանքներում ընդգրկվածների համար ապահովելով մոտ 336 մլն դրամի եկամուտ (համարժեք մոտ 697 հազար դոլարին):

## **2.12 ՄՆՏՁ-ի 2-րդ Բաղադրիչ. Ենթածրագրերի նախապատրաստում**

ՄՆՏՁ-ի 2-րդ Բաղադրիչով ֆինանսավորվում են այնպիսի ենթածրագրեր, որոնց իրականացման արդյունքում կբարելավեն շահառուների կենսապայմանները, հանրային ծառայությունների մատուցումը, կզարգանա համայնքների սոցիալական կապիտալը և ինստիտուցիոնալ ներուժը, կընդլայնվի բնակչության եկամուտներ ստանալու հնարավորությունը: Ենթածրագրերը կարող են բաղկացած լինել մի ընդհանուր նպատակի ուղղված բաղադրիչներից՝ միմյանց լրացնող և ուժեղացնող, և կարող են ֆինանսավորվել տարբեր աղբյուրներից: Բացի սոցիալ-տնտեսական բաղադրիչներից, ենթածրագրերը կարող են ունենալ տեղական նշանակության բիզնես ծրագրեր՝ գյուղմթերքի պահպանում և վերամշակում, կաթի հավաքման կետեր և վերամշակման արտադրամասեր, նոր տեխնոլոգիաների վրա հիմնված այգիներ, տնկարաններ, ջերմոցներ և այլն:

Ենթածրագրերի հայտեր կարող են ներկայացնել համայնքների խոշորացման արդյունքում ստեղծված նոր համայնքները, համայնքների գրանցված միությունները, ընդհանուր ծրագրի շուրջ միջհամայնքային համաձայնագրով միավորված համայնքների խմբերը: Այդ համայնքները նախ հիմնադրամին ներկայացնում են ենթածրագրի հայտ, այնուհետև հայտի հիման վրա նախաձեռնող խմբերը ձևավորում են ենթածրագրի նախնական առաջարկ, որը հիմնադրամի աշխատակիցների աջակցությամբ լրամշակվում է, ձևավորելով վերջնական առաջարկ: Այն անցնում է երկաստիճան փորձաքննություն, գնահատվում է Տարածքային կառավարման և զարգացման նախարարության գլխավորած Փորձագիտական աշխատանքային խմբի կողմից, հաստատվում է գործադիր կոմիտեի և ՀԲ-ի կողմից և իրականացվում է Ղեկավար ձեռնարկի ընթացակարգերի համաձայն:

Հաշվետու տարվա ընթացքում ՄՆՏՁ-ի 2-րդ Բաղադրիչի ներքո ենթածրագրերի իրականացման ուղղությամբ որևէ աշխատանք չի իրականացվել, սակայն այս Բաղադրիչով նախատեսված ընթացակարգերով աշխատանքներ են իրականացվել ԱՄՆ ՄՁԳ-ի և ՇՄՀԳ-ի դրամաշնորհային Ծրագրերի շրջանակներում (տես պարագրաֆ 2.14.2 և 2.14.3):

## **2.13 Ուսուցում և մասնագիտական օժանդակություն (ՄՕ) ՄՆՏՁ-ի Ծրագրի շրջանակներում**

### **2.13.1 Ուսուցում և մասնագիտական օժանդակություն ՄՆՏՁ-ի 1-ին Բաղադրիչի շրջանակներում**

ՄՆՏՁ Ծրագրի 1-ին Բաղադրիչի շրջանակներում միկրոծրագրի նախապատրաստման և փորձաքննության ընթացքում հիմնադրամի աշխատակիցներն աշխատել են բնակչության թիրախային խմբերի, ՏԻՄ-երի, համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ ղեկավարների և այլ շահառուների իրազեկման ուղղությամբ՝ հիմնադրամի միկրոծրագրերի տեսականու, ընտրության չափանիշների և ընթացակարգերի, շահառուների մասնակցության մեխանիզմների մասին և այլն, նաև խթանել են ՏԻՄ-երի ներկայացուցիչների և համայնքային խմբերի կազմակերպչական և տեխնիկական կարողությունների զարգացումը՝ նպաստելով ՀՏՀ-ի չափանիշներին համապատասխանող միկրոծրագրերի առաջարկների գեներացմանը: Համայնքապետարանին և ԾԻԿ-ին տրամադրվել է խորհրդատվություն՝ միկրոծրագրի հայտի փաթեթի մշակման փուլերի, ենթակառուցվածքի շահագործման և պահպանման, միկրոծրագրի ավարտից հետո համապատասխան ծառայության շարունակականության ապահովման, համայնքային ներդրման տրամադրման և բնակչության բոլոր խավերի, այդ թվում խոցելի խմբերի համար մատուցվող ծառայության մատչելիության վերաբերյալ:

Աղյուսակ 10-ում ներկայացվում են ամփոփ տվյալներ միկրոծրագրերի հայտերի գեներացման շրջանակներում հայտատու համայնքների անդամների, ավագանու և ԾԻԿ-երի համար անցկացված ուսուցման վերաբերյալ՝ հաշվետու կիսամյակի ընթացքում և 2017թ. հունիսի 30-ի դրությամբ:

ՄՆՏԶ Ծրագրի 1-ին Բաղադրիչի ներքո համայնքային խմբերի ուսուցման վերաբերյալ

Ում է ուղղված ուսուցումը	Հաշվետու կիսամյակի ընթացքում (24 միկրոծրագիր)			2017թ. հունիսի 30-ի դրությամբ (110 միկրոծրագիր)		
	Մասնակիցներ	Այդ թվում՝ կանայք		Մասնակիցներ	Այդ թվում՝ կանայք	
Հայտատու համայնքների ավագանիներ	340	123	36.2%	1,588	492	31.0%
Քննարկումներ համայնքներում	1,732	981	56.6%	7,991	3,839	48.0%
Ծրագրերի իրականացման կոմիտեներ	193	50	25.9%	802	244	30.4%

**2.13.2 Ուսուցում և մասնագիտական օժանդակություն զարգացման ծրագրերի նախապատրաստման նպատակով**

2017թ. 1-ին կիսամյակում 2 մարզերի 6 խոշորացված համայնքներում կայացել են տեղեկատվական սեմինարներ.

- հունվարի 30-31-ը՝ Տավուշի մարզի Այրում, Կողբ և Նոյեմբերյան խոշորացած համայնքներում, մասնակիցների թիվը՝ 86 հոգի, (31-ը՝ կանայք),
- փետրվարի 8-ից 10-ը՝ Շիրակի մարզի Սարապատ, Ամասիա, Արփի և Աշոցք համայնքներում, մասնակիցների թիվը՝ 97 հոգի, (38-ը՝ կանայք):

Սեմինարներին մասնակցել են գործող համայնքների ղեկավարներ, համայնքապետարանի աշխատակազմի անդամներ, ավագանու անդամներ, խոշորացվող համայնքների ղեկավարների և ավագանիների թեկնածուներ՝ ընդամենը 183 հոգի, (69-ը՝ կանայք): Սեմինարին ներկա են գտնվել նաև ՀՏԶ-ի գործընկերները, Տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ԱՄՆ ՄՁԳ-ի, Շվեյցարական զարգացման զործակալության, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության և տեղական լրատվական միջոցների ներկայացուցիչները:

2017թ. մարտ ամսվա ընթացքում Այրում, Կողբ, Նոյեմբերյան, Սարապատ, Ամասիա, Արփի, Աշոցք և Գորիս համայնքներում ենթածրագրերի նախաձեռնող խմբերի 124 անդամների համար (որից 15-ը՝ կանայք) կազմակերպվել են ուսուցումներ՝ ենթածրագրի առաջարկ պատրաստելու ձևաչափերի մանրամասն ներկայացմամբ, գործնական վարժությունների ընդգրկմամբ և խոշորացված համայնքների հիմնախնդիրների քննարկմամբ: Հետագայում, այդ համայնքների նախաձեռնող խմբերին տեխնիկական օժանդակություն է տրամադրվել աշխատանքային կարգով՝ ՀՏԶ-ի գրասենյակում, ենթածրագրերի առաջարկների ձևավորման վերաբերյալ, ֆինանսատեխնիկական, տնտեսական և այլ հարցերի շուրջ: Անհրաժեշտության դեպքում հետագա խորհրդատվությունը շարունակվել է էլեկտրոնային նամակագրությամբ:

**2.13.3 ՀՏԶ-ի աշխատակազմի ուսուցում**

Հաշվետու կիսամյակի ընթացքում հիմնադրամի աշխատակազմը վերապատրաստվել է հետևյալ ոլորտներում.

- Հաշվապահները մասնակցել են “Էկոնոմիկա և իրավունք” կազմակերպության, Բիզնեսի միջազգային ակադեմիայի և Միջազգային հաշվապահական ուսուցման կենտրոնի կազմակերպած 4 սեմինարների՝ հարկային փոփոխությունների պարզաբանման վերաբերյալ:
- 2017թ. մարտին հիմնադրամի Գնումների բաժնի մասնագետները մասնակցել են քննարկումներին և կարծիքների փոխանակմանը՝ ՀԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակում գնումները (գնանշման հարցում և բաց ազգային մրցույթ) ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով իրականացնելու վերաբերյալ:
- 2017թ. հունիսի 29-30-ը ՀՏԶ-ի գնումների մի մասնագետ մասնակցել է Գերմանիայի Միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) աջակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կազմակերպած գնումների համակարգողների վերապատրաստման դասընթացի:
- ՀՏԶ-ի 2 աշխատակից մասնակցել են Եվրոմիության «Աջակցություն ՀՀ Տարածքային կառավարման նախարարությանը, աջակցություն տարածքային զարգացման գործընթացներին» ծրագրի շրջանակներում Ալբանիա և Մակեդոնիա ճանաչողական այցին՝ Տարածաշրջանային և սոցիալ-տնտեսական զարգացմանը

վերաբերող ծրագրերին և նախագծերին, ինչպես նաև ՏՀ պլանավորման և ֆինանսավորման այլընտրանքային մեխանիզմներին ծանոթանալու նպատակով (Եվրոմիության ֆինանսավորմամբ):

## 2.14 Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

### 2.14.1 ԱԶԲ. ՍԱԲ Ծրագիր

Ասիական զարգացման բանկի վարկային ֆինանսավորմամբ իրականացվող **Սեյսմիկ անվտանգության բարելավման (ՍԱԲ) Ծրագրի** նպատակն է աջակցել ՀՀ կառավարության Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման (ԴՍԱԲ) Ծրագրին: ՍԱԲ Ծրագրի համար N 3284-ARM վարկը հաստատվել է 2015թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտել 2015թ. դեկտեմբերի 22-ին: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 107 մլն դոլար, որից 88.5 միլիոնը ԱԶԲ-ի վարկային միջոցներն են, իսկ 18.5 միլիոնը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը:

Ծրագրով նախատեսված է ուժեղացնել կամ նորովի կառուցել ԴՍԱԲ-ի առաջնային դպրոցների ցանկից ընտրված 46 դպրոցների շենքերը, այդ դպրոցների համար մշակել արտակարգ իրադրություններում արձագանքման գործողությունների պլաններ, դպրոցներին հարակից համայնքներում կազմակերպել իրազեկման բարձրացման միջոցառումներ, մասնագիտական վերապատրաստման դասընթացներ կազմակերպել շինհրապարակների առնվազն 100 աշխույժների և աշխատողների համար՝ սեյսմակայունության բարձրացման շինարարական տեխնոլոգիաների և մեթոդների վերաբերյալ, արդիականացնել 15 սեյսմիկ դիտակայաններ և վերապատրաստել աշխատակազմի 45 անդամների՝ սեյսմիկ մոնիթորինգի կանխատեսումների ոլորտում կարողությունները բարելավելու համար:

Ծրագրի ֆինանսավորումը հիմնված է արդյունքահեն վարկավորման սկզբունքի վրա: ՍԱԲ Ծրագրի արդյունքային ոլորտներ են.

- (i) դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացումը,
- (ii) սեյսմիկ աղետների պատրաստվածության և դրանց արձագանքելու կարողությունների ամրապնդումը,
- (iii) սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարմանը և նվազեցմանն աջակցող քաղաքականությունների և համակարգերի բարելավումը,
- (iv) սեյսմիկ անվտանգության ներդրումային ծրագրերի կատարման և իրականացման կարողությունների բարձրացումը:

Ստորև ներկայացվում են 2017թ 1-ին կիսամյակի ընթացքում ՍԱԲ Ծրագրով կատարված գործունեությունն ըստ արդյունքային ոլորտների:

#### Արդյունքային I ոլորտում՝

- UNICEF-ի և ՏԿՀՆ-ի աջակցությամբ Հայաստանի 1379 հանրակրթական դպրոցները գնահատվել են ըստ խոցելիության, և ձևավորել է տվյալների բազա՝ 424 դպրոցների տվյալների ընդգրկմամբ, որի հիման վրա ընտրվել են 20-ը, ևս 26-ը կընտրվեն առաջիկայում:
- Հիմնադրամն սկսել է առաջին խմբաքանակի 8 դպրոցների հետ կապված աշխատանքները: հունիսի 30-ի դրությամբ՝
  - Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոցի նախագիծը միջազգային վավերացման փուլում է,
  - Երևանի թիվ 135 դպրոցի համար ամփոփվում են շինարարական կազմակերպության ընտրության մրցույթի արդյունքները,
  - Գավառի թիվ 2 դպրոցի և Եղեգնաձորի թիվ 2 դպրոցի համար հայտարարվել է շինարարական կազմակերպության ընտրության մրցույթ,
  - Երևանի թիվ 153, Կապանի թիվ 7 և Նոր Խարբերդի թիվ 2 դպրոցների համար շինարարական կազմակերպության հետ պայմանագիր կնքվել է,
  - Վանաձորի թիվ 7 հիմնական դպրոցում շինարարությունը մեկնարկել է:
- Ակնկալվում է, որ ս/թ հուլիսի ընթացքում կհաստատվի դպրոցների երկրորդ խմբաքանակի ցուցակը:
- UNDP-ի կողմից մշակվել է տիպային դպրոցական շենքի մոդուլային նախագիծը, որը ներկայացվել է Քաղաքաշինության պետական կոմիտե, և գտնվում է քննարկման փուլում: Մոդուլային դպրոցը պետք է բավարարի ժամանակակից դպրոցներին ուղղված պահանջները՝ լինի օգտագործման համար հարմարավետ, առողջապահական և անվտանգության պայմաններին բավարարող, զարգացնող

ուսուցման միջավայրերով և այլն: Մոդուլային դպրոցի նախագիծը կօգտագործվի Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոցի կառուցման համար, ինչպես նաև 2-րդ խմբաքանակի դպրոցների կառուցման համար:

### **Արդյունքային II ոլորտում՝**

- Արտակարգ արձագանքման հանրային իրազեկման նյութերը մշակվել են և տրամադրվել Արտակարգ իրավիճակների նախարարությանը: Այն 8 համայնքներում, որտեղ տեղակայված են ծրագրի առաջին խմբաքանակում ընդգրկված դպրոցները, մարզային փրկարար վարչությունների կողմից իրականացվել են հանրային իրազեկման արշավներ և արտակարգ իրավիճակներին արձագանքման պլաններով նախատեսված տարհանման ուսումնական վարժանքներ: Իրազեկման դասընթացները և գործնական վարժանքներն ուղղված են եղել արտակարգ իրավիճակների վերաբերյալ գիտելիքների ավելացմանը և պատրաստվածության բարձրացմանը, ՏԻՄ-երի ներկայացուցիչների, դպրոցների վարչական կազմի, աշակերտների և համայնքի բնակիչների ընդգրկմամբ: Ընդհանուր առմամբ, վարժանքներում ներգրավված են եղել մոտ 2,500 մասնակից, այդ թվում՝ 1,429 կին: Յուրաքանչյուր իրականացված միջոցառման համար պատրաստվել է վերջինիս մասնակիցների, ընթացքի և մասնակիցների գնահատականի մասին տեղեկատվություն պարունակող հաշվետվություն և ներկայացվել է ԱԶԲ:
- 2017թ. հունիսի 23-24-ին Համաշխարհային բանկի կողմից անց է կացվել “Հայաստանի հանրապետությունում դպրոցների սեյսմիկ անվտանգության ապահովման գործնական ուղեցույցներ և վերապատրաստում” սեմինար՝ նախագծային կազմակերպությունների կարողությունների բարձրացման համար, որի նպատակն էր ներկայացնել դպրոցական շենքերի սեյսմակայության բարձրացման միջոցները և նոր դպրոցների նախագծման հետ կապված առաջարկները, օգնել նախագծային ընկերությունների ներկայացուցիչներին՝ հետևելու դպրոցների առաջին խմբաքանակի համար առաջարկվող նախագծային ուղեցույցներին, և սահմանել պլաններ և ստանդարտներ՝ Հայաստանում հանրային դպրոցներում սեյսմիկ ապահովությունը լավագույն միջազգային պրակտիկայի չափանիշների համաձայն արդիականացնելու և բարելավելու նպատակով: Սեմինարին մասնակցել են նաև 29 ներկայացուցիչներ՝ ՀՏՀՀ-ի՝ նախագծային և շինարարական աշխատանքների իրականացման համար մրցութային կարգով ընտրված կազմակերպություններից, հիմնադրամի ինժեներական կազմից և Քաղաքաշինության պետական կոմիտեից:
- Արտակարգ իրավիճակների նախարարության Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության հետ միասին հիմնադրամը պատրաստել է 15 սեյսմիկ դիտակայանների արդիականացման համար նախատեսված սարքավորումների ցանկ, որը ներկայացվել է Ծրագրի կառավարման կոմիտեին և ՍԱԲ-ի՝ ԱԶԲ-ի խորհրդատուի ուսումնասիրմանը: Խորհրդատուի կողմից կատարված մեկնաբանությունների հիման վրա փոփոխված ցանկը ներկայացվել է Ծրագրի ղեկավար կոմիտեի հաստատմանը:

### **Արդյունքային III ոլորտում՝**

- Դպրոցական շենքերի ուժեղացման և կառուցման ժամանակավոր ուղեցույցները մշակվում են ՀԲ-ի տեխնիկական աջակցությամբ: Ուղեցույցների վերանայման պայմանագիրը կնքվել է 2016թ. հունիսի 1-ին: Ուղեցույցները ներկայացվել են գործընկեր կազմակերպություններին՝ մեկնաբանությունների և առաջարկների համար: Այդ մեկնաբանությունները և առաջարկները հասցեագրելուց հետո ուղեցույցների վերջնական տարբերակները ՀԲ կներկայացնի Քաղաքաշինության պետական կոմիտեի հաստատմանը: Նախատեսվում է, որ Ա տեսակի դպրոցների ուղեցույցը կհաստատվի հուլիսի կեսին, իսկ Դ1 և Դ2 դպրոցների տեսակների համար ուղեցույցները պատրաստ կլինեն հուլիսի վերջին:
- Դպրոցական շենքերի ուժեղացման և կառուցման շինարարական նորմերի արդիականացումը կախված է Սեյսմիկ վտանգների հավանական քարտեզի արդիականացումից. 2016թ. մայիսի 30-ին սկսվել են վտանգների հավանականային քարտեզի արդիականացման աշխատանքները, որոնք իրականացվում են ՀԲ-ի կողմից: Քարտեզը պատրաստ կլինի 2017թ. նոյեմբերին:
- ԴՍԱԲ Ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2015թ. հուլիսի 23-ի N797 որոշմամբ: Վերանայված ԴՍԱԲ ծրագիրը՝ 425 դպրոցների ճշգրտված առաջնահերթությամբ հաստատվել է կառավարության կողմից 2017թ. հունվարի 26-ին:

### **Արդյունքային IV ոլորտում՝**

- ՍԱԲ Ծրագրի համար լրացուցիչ աշխատակազմ է վարձվել (11 հոգի, ինչպես նախատեսված է վարկային համաձայնագրով):

ՍԱԲ Ծրագրի Ղեկավար ձեռնարկը մշակվել և հաստատվել է ՀՏՀՀ խորհրդի կողմից 2016թ. սեպտեմբերին: Ասիական զարգացման բանկի առաջարկով ծրագրի շրջանակներում կիրառվող ՀԲ գնումների և



խորհրդատվական ծառայությունների օգտագործման ուղեցույցները փոխարինվել են Ասիական զարգացման բանկի ուղեցույցներով: Այս փոփոխությունը արտացոլվել է Ղեկավար ձեռնարկում, որի փոփոխված տարբերակը <S2< խորհրդի կողմից հաստատվել է 2017թ. մարտի 3-ին:

ԱԶԲ է ներկայացվել <S2<-ի՝ ՍԱԲ Ծրագրի աշխատակիցների վերապատրաստման պլանը, որով նախատեսված են դասընթացներ ծրագրերի իրականացման և կառավարման, ֆինանսական կառավարման և հաշվետվողության, գնումների, երաշխիքների, սոցիալական և գենդերային հարցերի, ինչպես նաև մոնիթորինգի և գնահատման բնագավառներում:

**Ապրանքների և ծառայությունների գնումներ.** Հաշվետու ժամանակաշրջանում ՍԱԲ-ի ներքո հիմնադրամի համար մրցութային կարգով գնվել են հետևյալ ծառայությունները.

- Կապանի թիվ 7 դպրոցի կառուցման համար մրցութային կարգով ընտրվել է շինարարական կազմակերպություն, որի հետ ս/թ հունիսի 23-ին կնքվել է պայմանագիր,
- Երևանի Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 դպրոցի կառուցման համար մրցութային կարգով ընտրվել է շինարարական կազմակերպություն, որի հետ ս/թ հունիսի 21-ին կնքվել է պայմանագիր,
- Նոր Խարբերդի թիվ 2 դպրոցի կառուցման համար անց է կացվել մրցույթ, պայմանագրի ստորագրումն ընթացքում է,
- Երևանի թիվ 135 դպրոցի կառուցման ծրագրի համար ս/թ մայիսի 25-ին հայտարարվել է մրցույթ, մրցութային փաթեթների ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է ս/թ հունիսի 21-ը,
- Գավառի թիվ 2 դպրոցի կառուցման ծրագրի համար ս/թ հունիսի 23-ին հայտարարվել է մրցույթ, մրցութային փաթեթների ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է հուլիսի 21-ը:
- “Խումբ 1” և “Խումբ 2” դպրոցների շինարարության տեխնիկական հսկողություն” առաջադրանքների կատարման համար Խորհրդատուների որակավորման հիման վրա ընտրության մեթոդով ընտրվել են 2 կազմակերպություններ, որոնց հետ կնքվել են պայմանագրեր: Վերահսկողության գործողությունները կսկսվեն շինարարական աշխատանքների մեկնարկից հետո:

**Բնապահպանական և սոցիալական երաշխիքներ.** Հաշվետու տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ՍԱԲ Ծրագրի շրջանակներում երաշխիքների պահպանման առնչությամբ կատարվել է հետևյալը.

- Ստեփանավանի թիվ 3 դպրոցի տեղանքի այցելություն, որի արդյունքում լրացվել է բնապահպանական գննության ստուգաթերթը և մշակվել է Բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ): Անցկացվել է Ստեփանավանի թիվ 3 դպրոցի կառուցման նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:
- Մշակվել և բնապահպանական պետական փորձաքննության են ներկայացվել Եղեգնաձորի թիվ 1 և Ստեփանավանի թիվ 3 դպրոցների նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտերը (ՆԳՀ):
- Բնապահպանական պետական փորձաքննության շրջանակում անցկացվել են Նոր Խարբերդի թիվ 2, Երևանի թիվ 135, Գավառի թիվ 2 և Եղեգնաձորի թիվ 1 դպրոցների 2-րդ հանրային քննարկումները:
- Երևանի թիվ 153, Նոր Խարբերդի թիվ 2, Գավառի թիվ 2, Երևանի թիվ 135 և Եղեգնաձորի թիվ 1 դպրոցների կառուցման նախագծերի վերաբերյալ ստացվել են բնապահպանական պետական փորձաքննության դրական եզրակացություններ:

Աղյուսակ 11-ում տվյալներ են բերվում վերոհիշյալ ծրագրերի բնապահպանական և սոցիալական գնահատման վերաբերյալ:

**Աղյուսակ 11. ՍԱԲ Ծրագրի ներքո իրականացվող ծրագրերի բնապահպանական և սոցիալական գնահատման աղյուսակ**

Կոդ	Ծրագրի անվանում	Կատեգորիա * ԱԶԲ / ՀՀ	ԲԿՊ-ի մշակում	ՆԳՀ-ի մշակում	1-ին Հանրային քննարկում, անցկացված	2-րդ Հանրային քննարկում, անցկացված	Բնապահպան ական դրական եզրակացու- թյուն, ստացված
A-01YN	Երևանի թիվ 153 դպրոց	«B» / «գ»	+	+	13.10.2016	26.12.2016	23.01.2017
A-02AR	Նոր Խարբերդի թիվ 2 դպրոց	«B» / «գ»	+	+	17.11.2016	11.01.2017	23.01.2017
A-04YN	Երևանի 135 դպրոց	«B» / «գ»	+	+	30.11.2016	25.01.2017	03.05.2017
A-05GQ	Գավառի թիվ 2 դպրոց	«B» / «գ»	+	+	13.12.2016	08.02.2017	16.02.2017
A-06VZ	Եղեգնաձորի թիվ 1 դպրոց	«B» / «գ»	+	+	16.12.2016	29.03.2017	13.04.2017

A-08LR	Ստեփանավանի թիվ 3 դպրոց	«Ե» / «Գ»	+	+	07.03.2017	-	-
--------	-------------------------	-----------	---	---	------------	---	---

\* բնապահպանական կատեգորիան՝ սահմանված ԱԶԲ-ի / ՀՀ օրենսդրության համաձայն

ԱԶԲ-ի 2017թ. մարտին կայացած առաքելության կողմից բնապահպանական երաշխիքների առումով արվել են հետևյալ երկու դիտարկումները.

- ✓ Գավառի դպրոցի քանդման աշխատանքներից հետո գոյացած շինարարական աղբը պատշաճ կերպով չի հեռացվել քանդման աշխատանքները իրականացրած կապալառուի կողմից, նրան զգուշացվել է միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին: Հարկ է նշել, որ դպրոցների քանդման աշխատանքները ընդգրկված չեն ՍԱԲ-ի ծրագրի մեջ և կատարվում են Պետական գույքի կառավարման վարչության ղեկավարությամբ:
- ✓ Կապանի դպրոցի տարածքում տեղակայված էլեկտրական ենթակայանը խոչընդոտում էր քանդման աշխատանքների կատարմանը: Ենթակայանը տեղափոխվել է, սակայն տեղափոխումից հետո հայտնաբերվել է մալուխ, և ներկայումս ընթանում են մալուխի տեղափոխման աշխատանքները:

Հարկադիր տարաբնակեցման առումով ՍԱԲ Ծրագիրը դասակարգվել է որպես C կատեգորիա (այսինքն՝ հարկադիր տարաբնակեցում ներառող ենթաձևերը մերժվում են): Սակայն, Երևանի հհ. 135 և 153 դպրոցներ կատարած նախնական ստուգայցերի արդյունքում պարզվել է, որ շինարարության իրականացումը փոքրածավալ բացասական ազդեցություն կարող է ունենալ հարակից տարածքում բնակվող մասնավոր գործարար հատվածի և տնային տնտեսությունների վրա: Համաձայն այս իրավիճակների համար մշակված «Հանրային իրազեկման ուղեցույցի», ՀՏՀՀ-ի կողմից 135 դպրոցի հարևանությամբ գործող ազդակիր վարսավիրանոցի և սեփական տան սեփականատերերի հետ կնքվել է փոխհամաձայնության ակտ, որով ամրագրվել է, որ հիմնադրամը կիրականացնի վերահսկողություն, որպեսզի քանդման աշխատանքների իրականացումը էական բացասական ազդեցություն չունենա այս մասնավոր սեփականատերերի համար: Առավել մեծ ազդեցություն կարող էր ունենալ 135 դպրոցի շենքի քանդման աշխատանքները դպրոցի շենքի հետ ընդհանուր պատ ունեցող մասնավոր վարսավիրանոցի վրա: Ներկայումս տվյալ հատվածում քանդման աշխատանքներն ավարտված են, ըստ սեփականատիրոջ հետ ձեռք բերված փոխհամաձայնության պահպանվել է ընդհանուր պատը, իսկ քանդման աշխատանքները ոչ մի էական վնաս չեն հասցրել վարսավիրանոցի շենքին: Սեփականատիրոջ հետ հարցումը բացահայտեց, որ վերջինս բավարարված է վարսավիրանոցի շենքի հատվածում քանդման աշխատանքների որակով, և քանդման աշխատանքների իրականացումը էական բացասական ազդեցություն չի ունեցել վարսավիրանոցի գործունեության վրա, մասնավորապես, գործունեությունը որոշակի օրերով չի դադարեցվել, չի արձանագրվել հաճախորդների հոսքի նվազում: Մյուս բոլոր ազդակիր անձանց դեպքում կանխատեսվող ազդեցությունը շատ չնչին է եղել: Այս ազդակիր անձինք տեղեկացվել են գործող Բողոքների լուծման մեխանիզմների մասին, ինչպես նաև հրավիրվել են դպրոցների կառուցման վերաբերյալ Բնապահպանական և սոցիալական հանրային քննարկումներին: Հաշվետու ժամանակահատվածում բողոքներ չեն արձանագրվել:

**ՍԱԲ Ծրագրով ստացված և ծախսված վարկային միջոցներ.** 2017թ. 1-ին կիսամյակում հիմնադրամը ՍԱԲ Ծրագրի շրջանակներում Կառավարության համաֆինանսավորման աղբյուրից ստացել է 169.2 մլն դրամ (համարժեք 349.8 հազար դոլարին): ԱԶԲ-ի միջոցներ չեն ստացվել:

ՍԱԲ Ծրագրի ներքո հաշվետու կիսամյակում և առ 2017թ. հունիսի 30-ը կատարված ծախսերն ամփոփ ներկայացված են Աղյուսակ 12-ում:

**Աղյուսակ 12. ՍԱԲ Ծրագրի՝ կիսամյակային և հանրագումարային ծախսերն ըստ ֆինանսավորման աղբյուրների**

Ֆինանսավորման աղբյուրը	2017թ. 1-ին կիսամյակում		Ընդամենը՝ Ծրագրի սկզբից, առ 30 հունիսի 2017թ.	
	Դրամ	Դոլար	Դրամ	Դոլար
ԱԶԲ-ի վարկային միջոցներ	170,454,880	352,452	363,135,632	753,352
ՀՀ կառավարության համաֆինանսավորում	39,550,685	81,797	82,813,687	171,857
<b>Ընդամենը</b>	<b>210,005,565</b>	<b>434,249</b>	<b>445,949,319</b>	<b>925,209</b>

### 2.14.2 ԱՄՆ ՄՁԳ. ՏԻԲ Ծրագիր

Հաշվետու կիսամյակում ընթացքի մեջ է եղել ՀՀ Կառավարության վարչատարածքային բարեփոխումներին աջակցելու նպատակով ԱՄՆ-ի ՄՁԳ-ի կողմից G2G ձևաչափով՝ ԱՄՆ-ի և ՀՀ-ի միջև 2013թ. սեպտեմբերի 28-ին կնքված # AAG-111-G-13-001 Համագործակցության համաձայնագրի ներքո հատկացված դրամաշնորհի հաշվին իրականացվող **Տեղական ինքնակառավարման բարեփոխումների (ՏԻԲ)** Ծրագիրը: Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընդհանուր համակարգում իրականացվում է Տարածքային կառավարման և զարգացման նախարարության մանդատի ներքո, որը ՀՏՁՀ-ին ուղղորդում է պետական քաղաքականությանն առնչվող հարցերում և վերահսկողություն է իրականացնում ծրագրերի ընտրության և գերակայությունների որոշման ընթացքում:

ՏԻԲ Ծրագիրը մեկնարկել է 2015թ. օգոստոսին, ընդհանուր արժեքը 9.39 մլն դոլար է, որից 8.6 միլիոնը դրամաշնորհն է, իսկ 786 հազարը ներդրվելու է համայնքների կողմից, ընդ որում դրամային ներդրումը կլինի 8.6 մլն-ի 2.5 տոկոսը, մնացածը կհաշվարկվի որպես հետագա շահագործման ծախսեր: Ծրագրում ընդգրկվել են 13 պիլոտային խոշորացված համայնքներ (տես Աղյուսակ 13), որոնցում միջհամայնքային ծրագրեր են իրականացվում ՄՆՏՁ Ծրագրի 2-րդ բաղադրիչի ընթացակարգերի համաձայն:

**Աղյուսակ 13. ՏԻԲ Ծրագրի ներքո իրականացվող ենթածրագրերն ըստ մարզերի և փուլի, առ 30 հունիսի 2017թ.**

Մարզ	Համայնք (փուլը)	Դոնորական ներդրում, դոլար	Համայնքի ներդրում, դոլար	Ընդամենը, դոլար
Լոռի	<b>Թումանյան</b> (իրականացում)	331,305	8,283	339,588
Շիրակ	<b>Ամասիա</b> (նախագծային փուլ)	338,357	8,459	346,816
	<b>Աշոցք</b> (նախագծային փուլ)	471,607	11,790	483,397
	<b>Արփի</b> (նախագծային փուլ)	309,034	7,726	316,760
	<b>Սարապատ</b> (նախագծային փուլ)	368,575	9,214	377,789
Սյունիք	<b>Տաթև</b> (իրականացում)	404,040	10,101	414,141
	<b>Գորիս</b> (փորձաքննության փուլ)	1,426,534	35,663	1,462,197
Արարատ	<b>Ուրցաձոր</b> (նախագծային փուլ)	272,805	6,820	279,625
Տավուշ	<b>Դիլիջան</b> (իրականացում)	1,739,595	43,490	1,783,085
	<b>Նոյեմբերյան</b> (փորձաքննության փուլ)	1,026,640	25,666	1,052,306
	<b>Այրում</b> (փորձաքննության փուլ)	678,918	16,973	695,891
	<b>Կողբ</b> (փորձաքննության փուլ)	365,289	9,132	374,421
Վայոց Ձոր	<b>Վայք</b> (նախագծային փուլ)	517,790	12,945	530,735
<b>Ընդամենը</b>	<b>13</b>	<b>8,250,489</b>	<b>206,262</b>	<b>8,456,751</b>

Այդ համայնքներում և դրանցում ընդգրկված բնակավայրերում հանդիպումներ և քննարկումներ են կայացել մարզպետարանների, համայնքների ավագանիների, բնակիչների հետ, որոնց նպատակն է եղել պարզել համայնքների առաջնահերթ կարիքները, գաղափար կազմել համայնքների մրցակցային առավելությունների մասին և քննարկել համայնքների զարգացմանն ուղղված կոնկրետ ծրագրեր: Արդյունքում ձևավորվել են ենթածրագրերի նախնական հայտեր և ներկայացվել ՀՏՁՀ-ին: Այնուհետև, դրանք հետ են ուղարկվել նախաձեռնող խմբերին՝ լրամշակման և ենթածրագրերի վերջնական առաջարկ ձևավորելու համար: Վերջնական առաջարկները փոխանցվել են հիմնադրամի փորձաքննության բաժին՝ նախնական փորձաքննության համար: ՏԻԲ Ծրագրում ընդգրկված խոշորացված համայնքներում իրականացվող ենթածրագրերի հակիրճ նկարագրությունը բերված է սույն հաշվետվության Հավելված 3-ում:

Խոշորացված համայնքներում իրականացվող ենթածրագրերն ըստ կարգի ենթակա են ուսումնասիրման բացասական ազդեցությունների առումով: Մասնավորապես, Թումանյան, Տաթև և Դիլիջան համայնքների կողմից ներկայացված ծրագրերի նախնական և վերջնական սոցիալական փորձաքննության արդյունքում ուսումնասիրվել է ենթածրագրերի հնարավոր բացասական սոցիալական ազդեցությունները մասնավոր հողօգտագործողների կամ բիզնես գործունեության վրա: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

որևէ բացասական ազդեցություն չկա, ուստի տարարակեցման գործողությունների պլանի մշակման անհրաժեշտություն չի առաջացել:

**ՏԻԲ Ծրագրի ֆինանսական միջոցների մասին.** դրամաշնորհային միջոցներից ստացվել է 1.21 մլն դոլար՝ համարժեք 584.51 մլն դրամին: Դրամային ներդրումներ են ստացվել 3 համայնքներից՝ շուրջ 16.8 մլն դրամ կամ մոտ 35 հազար դոլար գումարով (տես Աղյուսակ 14):

Հաշվետու կիսամյակի ընթացքում ՏԻԲ Ծրագրի

**Աղյուսակ 14. ՏԻԲ Ծրագրով 2017թ. 1-ին կիսամյակում համայնքների կատարած դրամային ներդրումները**

Համայնք	Կոդ	Ներդրումը	
		դրամ	դոլար
Դիլիջան	U-01	10,000,000	20,548.23
Տաթև	U-03	4,814,689	9,891.71
Թումանյան	U-02	2,000,000	4,145.16

Հաշվետու կիսամյակում և առ 2017թ. հունիսի 30-ը ԱՄՆ ՄԶԳ-ի դրամաշնորհից ստացված գումարները և ծախսերն ամփոփ ներկայացված են Աղյուսակ 15-ում:

**Աղյուսակ 15. ՏԻԲ Ծրագրի շրջանակներում ստացված միջոցները և կատարված ծախսերը**

Անվանում	2017թ. 1-ին կիսամյակում		Հանրագումարային՝ Ծրագրի սկզբից ի վեր	
	Դրամ	Դոլար	Դրամ	Դոլար
<b>Ստացվել է</b>				
Դրամաշնորհի միջոցներ	584,506,817	1,206,000	731,070,313	1,510,596
Համայնքների դրամային ներդրումներ	16,814,689	34,585	18,814,689	38,746
<b>Ծախսվել է</b>				
Ապրանքներ	495,905,600	1,023,898	600,379,600	1,239,925
Խորհրդատվական ծառայություններ	24,150,165	49,754	24,875,165	51,254
Այլ ծախսեր	16,668	35	33,335	69
<b>Ընդամենը</b>	<b>520,072,433</b>	<b>1,073,688</b>	<b>625,288,100</b>	<b>1,291,248</b>

ՏԻԲ Ծրագրի ներքո ֆինանսավորվող միջհամայնքային զարգացման ծրագրեր ուղղված են ոչ թե համայնքների օրավուր խնդիրների լուծմանը, այլ հիմնված են համայնքների մրցակցային առավելությունների վերհանման վրա, որ համայնքը զարգանա և սեփական ուժերով հայթայթի իր խնդիրները լուծելու համար անհրաժեշտ միջոցները:

Այդ ծրագրերը նպաստում են համայնքային ծառայությունների քանակի և որակի բարելավմանը, համայնքի կարողությունների բարձրացմանը՝ բազմակի անգամ ծագող նույնանման խնդիրներ լուծելու հարցում, բնակիչների կյանքի որակի աճին, նաև համայնքի ինքնուրույնության բարձրացմանը և բյուջեի համալրմանը: Դրան մեծապես նպաստում է հիմնադրամի կողմից համայնքներին համապատասխան գործիքակազմի տրամադրումը, որի արդյունքում հնարավոր է դառնում համալրել համայնքային բյուջեն (օրինակ գյուղտեխնիկական համայնքի անդամներին ավելի մատչելի գնով վարձույթի տալու միջոցով), նպաստել բնակիչների եկամուտների աճին (այգիների, հացահատիկային և այլ մշակաբույսերի մշակման ընդլայնման հնարավորություն տալով), և, բացի այդ, բնակիչների վրա դրական ազդեցություն ունենալով ժամանակակից և նոր տեխնիկայի օգտագործմամբ:

Մեծ է կանոնավոր աղբահանության կազմակերպման պահանջը, որը բացի այդ կարևոր խնդիր լուծումից, նաև նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորություն է տալիս: Միջհամայնքային ճանապարհների շահագործմանն առնչվող խնդիրների լուծումը նույնպես հիմնված է ոչ թե մի քանի կիլոմետր ճանապարհի ասֆալտապատման կամ կառուցման վրա, այլ գրունտային ճանապարհների տափանման, սպասարկման համար անհրաժեշտ մեքենաների օգտագործման միջոցով և ճանապարհների ավելի երկարաժամկետ շահագործումը հնարավոր դարձնելով:

**Աղյուսակ 16. ՏԻԲ Ծրագրի ներքո գնված մեքենասարքավորումներ, առ 30.06 2017թ.**

Աղյուսակ 16-ում ամփոփ տվյալներ են ներկայացված ՏԻԲ Ծրագրի ներքո 2017թ. հունիսի 30-ի դրությամբ համայնքների համար գնված մեքենասարքավորումների վերաբերյալ, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 564 մլն դրամ կամ ավելի քան 1.16 մլն դոլար:

Տրվել է համայնքին	Անվանում
Դիլիջան	գրեյդեր
	բազմաֆունկցիոնալ էքսկավատոր
	բազմաֆունկցիոնալ էքսկավատոր
	ինքնաթափ մեքենա Ա
	ինքնաթափ մեքենա Բ
	ինքնաթափ մեքենա Բ
	աշտարակ մեքենա վիպո 12-01
	աղբատար մեքենա Բ
	աղբատար մեքենա Բ
	քաղաքային կոմունալ վակուումային փոշեկով
	թրթուրավոր տրակտոր
Վայք	աղբատար մեքենա Ա
	բազմաֆունկցիոնալ կոմունալ ու ձյուն մաքրող մեքենա
Տաթև	աղբատար մեքենա Բ
	ինքնաթափ մեքենա
	կոմբայն
	կոմբայն
	գրեյդեր
Թումանյան	բազմաֆունկցիոնալ էքսկավատոր
	աղբատար մեքենա Բ
	ինքնաթափ մեքենա
	բազմաֆունկցիոնալ էքսկավատոր

**2.14.3 Շվեյցարական միջազգային համագործակցության դրամաշնորհային Ծրագիր**

**ՇՄՀԳ-ի** կողմից 2.43 մլն դոլարի դրամաշնորհ է հատկացվել Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի խոշորացված համայնքներում միջհամայնքային ենթաձրագրերի իրականացնելու նպատակով: Դրամաշնորհը կառավարվում է ՀԲ-ի կողմից: Ծրագիրն ուժի մեջ է մտել 2017թ. սկզբին:

Այս դրամաշնորհի շրջանակներում ՄՆՏԶ Ծրագրի 2-րդ բաղադրիչի ընթացակարգերի համաձայն իրականացվող միջհամայնքային ծրագրերում ընդգրկվել են հետևյալ 5 խոշորացված համայնքները.

- Սյունիքի Տեղ համայնքում (Տեղ, Արավուս, Կոռնիձոր, Քարաշեն, Խնածախ, Վաղատուր, Խոզնավար),
- Սյունիքի Մեղրի համայնքում (Մեղրի, Ագարակ, Ալվանք, Լեհվազ, Կարճևան, Լիճք, Գուղեմնիս, Կուրիս, Նոնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր, Տաշտուն բնակավայրերի ընդգրկմամբ),
- Սյունիքի Գորայք համայնքում (Գորայք, Ծղուկ, Սառնակունք, Սպանդարյան),
- Վայոց Ձորի Զառիթափ համայնքում (Զառիթափ, Բարձրունի, Մարտիրոս, Սերս, Գոմք, Նոր Ազնաբերդ, Խնձորուտ, Արտավան, Սարավան),
- Վայոց Ձորի Զերմուկ համայնքում (Զերմուկ, Կեչուտ, Գնդեվազ, Հերիեր, Կարմրաշեն):

Աղյուսակ 17-ում հակիրճ տվյալներ են բերված վերոհիշյալ համայնքներում իրականացվող ենթաձրագրերի մասին:

**Աղյուսակ 17. Տվյալներ ՇՄՀԳ Ծրագրի շրջանակներում իրականացվող ենթաձրագրերի մասին,  
առ 30 հունիսի 2017թ.**

Մարզ	Համայնք (փուլ)	Դոնորական ներդրում, դոլար	Համայնքի ներդրում, դոլար	Ընդամենը, դոլար
Սյունիք	Տեղ (փորձաքննության 1 փուլ)	522,745	13,069	535,814
	Գորայք (փորձաքննության 2 փուլ)	121,680	32,340	154,020
	Մեղրի (փորձաքննության 2 փուլ)	770,185	19,194	789,379
Վայոց Ձոր	Զերմուկ (փորձաքննության 2 փուլ)	613,210	15,191	628,401
	Զատիթափ (փորձաքննության 2 փուլ)	272,480	7,415	279,895
<b>Ընդամենը</b>	<b>5 ենթաձրագիր</b>	<b>2,300,300</b>	<b>87,209</b>	<b>2,387,509</b>

**ՇՄՀԳ Ծրագրի ֆինանսական միջոցների մասին.**

Աղյուսակ 18. 2017թ. 1-ին կիսամյակում ՇՄՀԳ Ծրագրի համայնքների կատարած դրամային ներդրումները

Հաշվետու կիսամյակի ընթացքում ՇՄՀԳ Ծրագրի դրամաշնորհային միջոցներից ստացվել է 300 հազար դոլար՝ համարժեք 145.3 մլն դրամին: Նաև երկու համայնքներից ստացվել են դրամային ներդրումներ՝ շուրջ 11.6 մլն դրամ կամ մոտ 24 հազար դոլար գումարով (տես Աղյուսակ 18):

Ենթաձրագրի անվանում	Կոդ	Ներդրումը	
		դրամ	դոլար
Զերմուկի համայնք	S-03	3,687,692	7,654
Գորայքի համայնք	S-01	7,866,343	16,301

Կիսամյակի ընթացքում կատարված ծախսերը կազմում են 1.77 մլն դրամ՝ համարժեք 3,659 դոլարին: Ծրագիրն ուժի մեջ է մտել 2017թ. սկզբին, ուստի կիսամյակային և հանրագումարային ծախսերը համընկնում են (Աղյուսակ 19):

**Աղյուսակ 19. ՇՄՀԳ Ծրագրի շրջանակներում ստացված միջոցները և կատարված ծախսերը**

Անվանում	2017թ. 1-ին կիսամյակում	
	Դրամ	Դոլար
<b>Ստացվել է</b>		
Դրամաշնորհի միջոցներ	145,248,000	300,000
Համայնքների դրամական ներդրումներ	11,554,035	23,955
<b>Ծախսվել է</b>		
Խորհրդատվական ծառայություններ	1,769,913	3,659

**2.14.4 ՀԲ-ի Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացման Ծրագիր**

ՀԲ-ի կողմից աջակցվող **Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացման (ՏՏԵԶ)** Ծրագիրը նույնպես իրականացվում է ՀՏԶՀ-ի կողմից: Ծրագրի ընդհանուր արժեքը 68.72 մլն դոլար է՝ ներառյալ 55 մլն վարկային միջոցներ: Այն մեկնարկել է 2016թ. դեկտեմբերի 29-ին:

Առայժմ Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից դրամաշնորհային միջոցների հաշվին պատվիրվել են Գառնիի, Գորիսի, Զորաց քարերի և Դվինի ենթաձրագրերի նախագծերը, որոնք ներկայացվելու են ՀԲ-ի հաստատմանը, այնուհետև փոխանցվելու են ՀՏԶՀ-ին՝ վերջնական փորձաքննության համար:

Հաշվետու կիսամյակում ստացվել է 52.4 մլն դրամ՝ համարժեք 108 հազար դոլարին: Աղյուսակ 20-ում ներկայացված են ՏՏԵԶ Ծրագրի շրջանակներում ստացված և ծախսված միջոցներն ըստ ֆինանսավորման աղբյուրի: Ընդ որում, կիսամյակային և հանրագումարային ծախսերը համընկնում են:

**Աղյուսակ 20. ՏՏԵՁ-ի դրամաշնորհային Ծրագրով ստացված միջոցները և ծախսերը, առ 30 հունիսի 2017թ.**

Ֆինանսավորման աղբյուրը	ստացվել է		ծախսվել է	
	Դրամ	Դոլար	Դրամ	Դոլար
Վարկային միջոցներ	48,488,000	100,000	8,158,162	16,872
ՀՀ կառավարության համաֆինանսավորում	3,881,000	8,023	2,039,541	4,218
<b>Ընդամենը</b>	<b>52,369,000</b>	<b>108,023</b>	<b>10,197,703</b>	<b>21,090</b>


**III. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ**

ՄՆՏՁ Ծրագրում համայնքային մասնակցությունը դիտարկվում է որպես ծրագրի համաֆինանսավորման մասնաբաժին, որի համար 1-ին բաղադրիչով սահմանված է.

- 4% նվազագույն ներդրում՝ առավել խոցելի դասի համայնքների համար.
- 7% նվազագույն ներդրում՝ խոցելի դասի համայնքների համար.
- 10% նվազագույն ներդրում նվազ խոցելի դասի համայնքների համար:

Միկրոծրագրեր կարող են իրականացվել նաև մարզկենտրոններում: Վերջիններիս համար պետք է կատարվի առնվազն 10% համայնքային ներդրում:

Նկ. 5. 2017թ. 1-ին կիսամյակում ՄՆՏՁ-1-ով կատարված համայնքային դրամական ներդրումներն ըստ աղբյուրների, մլն դրամ



Համայնքի ներդրման հիմնական աղբյուրներն են տեղական բյուջետային հատկացումները, համայնքի բոլոր անդամներից հանգանակված գումարները և նվիրատուների ներդրումները: Փորձաքննության առաջին փուլից հետո կնքվող նախնական համաձայնագրում սահմանվում է համայնքային ներդրումի առաջին մասնաբաժինը. որպես կանոն, այն կազմում է համայնքային ամբողջ ներդրման 50%-ը և կարող է փոփոխվել միայն հիմնադրամի Գործադիր կոմիտեի որոշմամբ:

Համայնքի ներդրման կատարումը նախապայման է հանդիսանում միկրոծրագրի շինարարական աշխատանքների մեկնարկի համար. դրանք սկսվում են այն բանից հետո, երբ համայնքի ամբողջական ներդրումը փոխանցվում է ՀՏՁ-ի բանկային հաշվին:

Հաշվետու կիսամյակի ընթացքում 20 միկրոծրագրերի համայնքների կողմից կամ համայնքների անունից տրվել են դրամական ներդրումներ՝ շուրջ 90.86 մլն դրամ ընդհանուր գումարով (համարժեք 188 հազար ԱՄՆ դոլարին): Նկ. 5-ում և Աղյուսակ 21-ում ներկայացվում են 2017թ. կատարված դրամական ներդրումները:

**Աղյուսակ 21. Հաշվետու կիսամյակում ՄՆՏՁ-ի 1-ին բաղադրիչով համայնքների դրամական ներդրումներն ըստ աղբյուրների**

Աղբյուրը	N *	Ներդրումը, դրամ	Ներդրումը, դոլար	%
Համայնք	12	49,982,009	103,653	55.0%
Վարդանանց Ասպետներ	5	22,381,903	46,422	24.6%
«Հայրենիք» միություն	2	16,978,389	35,067	18.7%
Անհատ բարերարներ (ՀԸԲՄ միջոցով)	1	1,520,738	3,138	1.7%
<b>Ընդամենը՝</b>	<b>20</b>	<b>90,863,039</b>	<b>188,280</b>	<b>100%</b>

\* Մի միկրոծրագրի համար ներդրումը կարող է լինել տարբեր աղբյուրներից:





2017թ. հունիսի 30-ի դրությամբ 6 միկրոծրագրերի համայնքներ, այն է՝ TGQ-08 Գավառի թ. 5, TGQ-03-Գեղամավանի և TTV-07-Արծվաբերդի մանկապարտեզների, TKQ-02-Քաղսիի առողջապահական կենտրոնի, TSQ-11-Որոտանի ջրատարի, TLR-05-Ախթալայի թ.2 դպրոցի համայնքները լրիվ կամ մասնակիորեն ներդրում են կատարել հիմնադրամի համար ընդունելի նախագծերի, հեղինակային հսկողության պայմանագրերի, փորձաքննության հետազոտությունների եզրակացությունների և միկրոծրագրերի համար պիտանի նյութերի տեսքով, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 47.09 մլն դրամ:

2017թ. հունիսի 30-ի դրությամբ ՄՆՏԶ Ծրագրի 1-ին բաղադրիչի ներքո կատարված աշխատանքների դիմաց համայնքային ներդրումների հաշվին վճարվել է 297.6 մլն դրամ (620.1 հազար դոլար): Հարկ է նշել, որ համայնքապետարաններից և կապալառուներից ստացված տեղեկատվության համաձայն շինարարական աշխատանքներում ընդգրկվածների շուրջ 60 տոկոսը միկրոծրագրերի համայնքների բնակիչներ են:

**Ներդրումներ ԱՄՆ ՄԶԳ-ի և ՇՄՀԳ-ի դրամաշնորհային ծրագրերով.** ԱՄՆ ՄԶԳ-ի և ՇՄՀԳ-ի դրամաշնորհային Ծրագրերի շրջանակներում ենթածրագրերն իրականացվում են ՄՆՏԶ-ի 2-րդ Բաղադրիչի ընթացակարգերով: Ղեկավար ձեռնարկի համաձայն, Բաղադրիչ 2-ի ենթածրագրերում համայնքների ներդրման չափը մինչև 5% է: Այն դեպքերում, երբ հայտատու համայնքների խմբերը ունեն երկու կամ ավելի խիստ խոցելի կամ միջին խոցելիության համայնքներ, համայնքների խումբը կկատարի 2,5% տոկոսի ներդրում:

Հաշվետու կիսամյակի ընթացքում ԱՄՆ ՄԶԳ-ի և ՇՄՀԳ-ի դրամաշնորհային Ծրագրերի շրջանակներում իրականացվող 5 ենթածրագրերի համար համայնքների կողմից կատարվել են 29.37 մլն դրամ կամ 58.5 հազար դոլարի դրամային ներդրումներ (տես պարագրաֆ 2.14.2 և 2.14.3):

#### **IV. ԳՈՐԾԱԴԻՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

Հաշվետու կիսամյակում, պայմանավորված նոր Ծրագրերի մեկնարկով և աշխատանքների ծավալի ավելացմամբ, հիմնադրամի աշխատակազմն ընդլայնվել է: Մրցութային կարգով նոր մասնագետներ են ընդունվել:

- ՄՆՏԶ ծրագրի համար աշխատանքի է ընդունվել մեկ տնտեսագետ-վերլուծաբան: Աշխատանքային պայմանագրի ավարտի կապակցությամբ գրասենյակի մեկ փոխտնօրեն ազատվել է աշխատանքից: Գնումների մեկ մասնագետ ազատվել է աշխատանքից իր դիմումի համաձայն:
- ՏՏԵԶ ծրագրով նոր աշխատողներ են ընդունվել՝ Ծրագրի համակարգող և մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետ:

Ս/թ ապրիլի 28-ին կայացած Խորհրդի նիստում հաստատվեց և ուժի մեջ մտավ ՀՏԶԿ-ի ինստիտուցիոնալ նոր կառուցվածքը, որը հիմնադրամի ինստիտուցիոնալ զարգացման ծրագրի հետ միասին մշակվել էր խորհրդատուի կողմից, հաշվի առնելով հիմնադրամի արագորեն ընդլայնվող ծրագրային պորտֆելը և միջհամայնքային զարգացման ծրագրերի իրականացումը:

2017թ. մայիս ամսին անց է կացվել աշխատակազմի մասնագիտական որակավորման գնահատում, որի արդյունքների հիման վրա աշխատակիցների հետ նոր աշխատանքային պայմանագրեր են կնքվել:

Հաշվետու կիսամյակում՝ ապրիլ-մայիս ամիսներին “ՍՕՍ-Աուդիտ” ընկերությունը անցկացրել է ֆինանսական աուդիտ, որը վերաբերվում էր ՄՆՏԶ, ՍԱԲ Ծրագրերի և ՀՏԶԿ-ի (որպես կազմակերպություն) 2016թ. ֆինանսական հաշվետվություններին: Աուդիտի եզրակացություններում նշված է, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում ֆինանսական վիճակը և դրամական հոսքերը՝ միջազգային ստանդարտների համաձայն: Աուդիտի եզրակացությունն ըստ կարգի հրապարակվել է Ազդարարի և ՀՏԶԿ-ի կայքէջերում:

Այս կիսամյակում իրականացվեց ՀՏԶԿ-ի գրասենյակի տարածքի վերանորոգումը: Գրասենյակի համար մրցութային եղանակով գնվել են կահույք և գրասենյակային այլ սարքավորումներ:

Հաշվետու կիսամյակի ընթացքում գրասենյակային սարքավորումները և ավտոմեքենաները աշխատել են անխափան: Այդ ընթացքում ավտոմեքենաների վազըր կազմել է 149,567 կմ, իսկ վառելիքի ծախսը՝ 18,480 լիտր:

**Վ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

Հաշվետու կիսամյակի ընթացքում ՀՏՀ վարում էր հետևյալ բանկային հաշիվները Պետական գանձապետարանում.

- ՄՆՏՁ վարկային Ծրագրի համար** երկու հաշիվ՝ վարկային և կառավարության համաֆինանսավորման միջոցների համար: Այն լրացվել է չորս անգամ՝ 1.71 մլն դոլար ընդհանուր գումարով (համարժեք 826.9 մլն դրամին): Կառավարության համաֆինանսավորման գծով ստացվել է պետբյուջեով նախատեսված 256.8 մլն դրամի (համարժեք 530 հազար ԱՄՆ դոլարին) հատկացումը:
- Ասիական զարգացման բանկի ՍԱԲ Ծրագրի համար 2** հաշիվ՝ վարկային և կառավարության համաֆինանսավորման միջոցների համար: ՍԱԲ Ծրագրի հատուկ հաշիվը չի լրացվել, քանի որ տարեսկզբին եղած մնացորդը բավարարում էր ծրագրի պահանջները: Համաֆինանսավորման գծով ստացվել է պետբյուջեով նախատեսված 169.2 մլն դրամ՝ համարժեք 349.8 հազար դոլարին:
- ՏՏԵՁ Ծրագրի համար** երկու հաշիվ՝ վարկային և կառավարության համաֆինանսավորման միջոցների համար: Վարկային հաշիվը լրացվել է մեկ անգամ՝ 100 հազար դոլար ընդհանուր գումարով, համարժեք 48.5 մլն դրամին: Համաֆինանսավորման գծով ստացվել է պետբյուջեով նախատեսված 3.9 մլն դրամ, որը կազմում է 8,023 դոլար:
- ՄՆՏՁ դրամաշնորհային Ծրագրի (ՇՄՀԳ-ի դրամաշնորհ) համար** մեկ հաշիվ (դոլարով): Այն լրացվել է մեկ անգամ՝ 300 հազար դոլար ընդհանուր գումարով, որը կազմում է 145.3 մլն դրամ:
- ԱՄՆ ՄՁԳ դրամաշնորհային ՏԻԲ Ծրագրի համար** մեկ հաշիվ (դոլարով): Այն լրացվել է 6 անգամ՝ 1.21 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով՝ համարժեք 584.5 մլն դրամին:

Համայնքային դրամական և դոլարային ներդրումների հաշիվները գտնվում են “Արարատ” բանկում: ՄՆՏՁ Ծրագրի շրջանակներում համայնքների դրամական ներդրումների աղբյուրով ստացվել է ավելի քան 119 մլն դրամ (կամ 246.8 հազար դոլար):

Ստորև ամփոփ ներկայացվում են ՀՏՀ-ի բոլոր Ծրագրերի կիսամյակային և հանրագումարային ծախսերը:

**Աղյուսակ 23. ՀՏՀ-ի բոլոր Ծրագրերի կիսամյակային և հանրագումարային ծախսերը**

Ծրագիր	2017թ. 1-ին կիսամյակում		Հանրագումարային՝ առ 2017թ. հունիսի 30-ը	
	Դրամ	Դոլար	Դրամ	Դոլար
ՄՆՏՁ	895,906,263	1,853,934	5,767,478,329	12,031,542
ՍԱԲ	210,005,565	434,249	445,949,319	925,209
ՏՏԵՁ	10,197,700	21,091	10,197,703	21,091
ՏԻԲ / ԱՄՆ ՄՁԳ	520,072,433	1,073,687	625,288,100	1,291,248
ՇՄՀԳ	1,769,913	3,659	1,769,913	3,659

Հաշվետու ժամանակաշրջանում ՄՆՏՁ Ծրագրով կիսամյակային պլանը կատարվել է 88%-ով՝ պլանավորված 2.11 մլն դոլարի դիմաց ծախսվել է 1.85 մլն դոլար, իսկ շինարարական աշխատանքների գծով պլանը կատարվել է 95%-ով:

ՄՆՏՁ Ծրագրի ներքո հաշվետու կիսամյակում և 2017թ. հունիսի 30-ի դրությամբ կատարված ծախսերն ըստ Ծրագրի բաղադրիչների և ֆինանսավորման աղբյուրների ներկայացված են Հավելված 5-ում:

ՀՏՀ-ի գործադիր տնօրեն

Ա. Կիրակոսյան

ՄՆՏՁ-ի միկրոձրագրերի ցուցակը 2017թ. հունիսի 30-ի դրությամբ

No	Մարզ	Կոդ	Ծրագիր	Տեսակ	Խոցելիություն	Շահառուներ	Ներկա փուլը
1.	Արագածոտն	TAN-01	Ալազյազ գ. դպրոցի վերակառուցում	Դպրոց	խիստ խոցելի	464	Շինաշխատանքներ
2.	Արագածոտն	TAN-02	Ուջանի մանկապարտեզի մեկ մասնաշենքի վերակառուցում, քեռուցման համակարգի կառուցում	Մանկապարտեզ	խոցելի	3,406	Ավարտված
3.	Արագածոտն	TAN-03	Օհանավանի մանկապարտեզի վերակառուցում	Մանկապարտեզ	խոցելի	2,563	Շինաշխատանքներ
4.	Արագածոտն	TAN-04	Փարպիի մանկապարտեզի վերակառուցում	Մանկապարտեզ	խոցելի	2,470	Շինաշխատանքներ
5.	Արագածոտն	TAN-05	Ապարանի թիվ 1 դպրոցի մեկ մասնաշենքի վերակառուցում մանկապարտեզի	Մանկապարտեզ	խիստ խոցելի	676	Շինաշխատանքներ
6.	Արագածոտն	TAN-06	Աշտարակ ք. "Արևիկ" մանկապարտեզի վերակառուցում	Մանկապարտեզ	խոցելի	540	Շինաշխատանքներ
7.	Արագածոտն	TAN-07	Թալինի թիվ 3 մանկապարտեզի վերակառուցում	Մանկապարտեզ	խոցելի	440	Շինաշխատանքներ
8.	Արագածոտն	TAN-08	Ոսկեազի մանկապարտեզի վերակառուցում	Մանկապարտեզ	նվազ խոցելի	4,382	Շինաշխատանքներ
9.	Արագածոտն	TAN-10	Թաթուլ գյուղի համայնքի կենտրոնի քեռուցման համակարգի կառուցում	Համայնքի կենտրոն	խոցելի	1,005	Նախնական փորձաքննություն
10.	Արագածոտն	TAN-11	Արագած գյուղի մանկապարտեզի կառուցում	Մանկապարտեզ	խոցելի	3,750	Նախնական փորձաքննություն
11.	Արագածոտն	TAN-12	Շենավան գյուղի մանկապարտեզի կառուցում	Մանկապարտեզ	խիստ խոցելի	1,924	Նախնական փորձաքննություն
12.	Արմավիր	TAR-01	Արշալույս գյուղի կիսակառուց մանկապարտեզի շենքի շինարարության ավարտ	Մանկապարտեզ	խոցելի	4,314	Ավարտված
13.	Արմավիր	TAR-02	Մրգաստանի դպրոցի մարզադահլիճի կառուցում	Դպրոց	խոցելի	1,580	Վերջնական փորձաքննություն
14.	Արմավիր	TAR-03	Ալաշկերտի մանկապարտեզի կառուցում	Մանկապարտեզ	խիստ խոցելի	2,135	Շինաշխատանքներ
15.	Արմավիր	TAR-04	Արզավանի մանկապարտեզի վերակառուցում	Մանկապարտեզ	խոցելի	2,448	Վերջնական փորձաքննություն
16.	Արմավիր	TAR-05	Այգեշատի դպրոցի վերակառուցում	Դպրոց	խոցելի	2,100	Շինաշխատանքներ
17.	Արմավիր	TAR-06	Երասխահուն գյուղի դպրոցի վերակառուցում	Դպրոց	խոցելի	2,062	Վերջնական փորձաքննություն
18.	Արմավիր	TAR-07	Հայթաղի մանկապարտեզի վերակառուցում, ընդլայնում	Մանկապարտեզ	խոցելի	3,194	Նախնական փորձաքննություն
19.	Արարատ	TAT-01	Նորաշեն գյուղի ամբուլատորիայի հիմնանորոգում	Առողջապահական	խոցելի	3,716	Ավարտված
20.	Արարատ	TAT-02	Գետազատի համայնքի կենտրոնի վերակառուցում	Համայնքի կենտրոն	խոցելի	2,193	Վերջնական փորձաքննություն
21.	Արարատ	TAT-03	Արտաշատ ք. թիվ 4 մանկապարտեզի վերակառուցում	Մանկապարտեզ	խոցելի	496	Ավարտված
22.	Արարատ	TAT-04	Դաշտաքարի մանկապարտեզի կառուցում	Մանկապարտեզ	խոցելի	755	Գնում
23.	Արարատ	TAT-05	Աբովյանի մանկապարտեզի կառուցում	Մանկապարտեզ	խոցելի	1,600	Գնում
24.	Արարատ	TAT-06	Արարատ գ. մանկապարտեզի 3-րդ մասնաշենքի վերակառուցում	Մանկապարտեզ	նվազ խոցելի	8,275	Շինաշխատանքներ
25.	Արարատ	TAT-07	Ջրահովիտի մանկապարտեզի տարածքի բարեկարգում	Մանկապարտեզ	խոցելի	1,236	Նախնական փորձաքննություն
26.	Արարատ	TAT-09	Այգավանի մանկապարտեզի վերակառուցում	Մանկապարտեզ	նվազ խոցելի	3,853	Նախնական փորձաքննություն
27.	Արարատ	TAT-10	Նոր Ուլի համայնքի մանկապարտեզի կառուցում	Մանկապարտեզ	խիստ խոցելի	985	Նախնական փորձաքննություն
28.	Արարատ	TAT-11	Երասխի դպրոցի մասնաշենքի վերակառուցում մանկապարտեզի	Դպրոց	խիստ խոցելի	910	Նախնական փորձաքննություն
29.	Գեղարքունիք	TGQ-01	Ծակքարի մանկապարտեզի շենքի վերակառուցում	Մանկապարտեզ	խոցելի	2,843	Շինաշխատանքներ
30.	Գեղարքունիք	TGQ-02	Լիճքի համայնքի կենտրոնի վերակառուցում մանկապարտեզի տեղակայումով:	Համայնքի կենտրոն	նվազ խոցելի	5,487	Շինաշխատանքներ

No	Մարզ	Կոդ	Ծրագիր	Տեսակ	Խոցելիություն	Շահառուներ	Ներկա փուլը
31.	Գեղարքունիք	TGQ-03	Գեղամավանի մանկապարտեզի մեկ մասնաշենքի վերակառուցում	Մանկապարտեզ	խոցելի	2,068	Ավարտված
32.	Գեղարքունիք	TGQ-04	Սևան ք. «Զարթոնք» մանկապարտեզի վերակառուցում	Մանկապարտեզ	խոցելի	380	Շինաշխատանքներ
33.	Գեղարքունիք	TGQ-05	գ. Դոմաշենի մանկապարտեզի մեկ մասնաշենքի վերակառուցում	Մանկապարտեզ	խոցելի	2,800	Ավարտված
34.	Գեղարքունիք	TGQ-06	Ճամբարակի թ3 մանկապարտեզի վերակառուցում	Մանկապարտեզ	խիստ խոցելի	5,800	Շինաշխատանքներ
35.	Գեղարքունիք	TGQ-07	Ծաղկաշենի միջնակարգ դպրոցի վերակառուցում	Դպրոց	խիստ խոցելի	622	Շինաշխատանքներ
36.	Գեղարքունիք	TGQ-08	Գավառի թ.5 մանկապարտեզի վերակառուցում	Մանկապարտեզ	խոցելի	390	Շինաշխատանքներ
37.	Գեղարքունիք	TGQ-09	Վարդաձորի մանկապարտեզի կառուցում	Մանկապարտեզ	խոցելի	3,033	Շինաշխատանքներ
38.	Գեղարքունիք	TGQ-10	Աղբերքի խմելու ջուր	Խմելու ջուր	խիստ խոցելի	249	Վերջնական փորձաքննություն
39.	Գեղարքունիք	TGQ-11	Արծվանիստի խմելու ջրի արտաքին համակարգի կառուցում	Խմելու ջուր	խոցելի	3,218	Վերջնական փորձաքննություն
40.	Կոտայք	TKQ-02	Քաղսիի բուժամբույսատորիայի կառուցում	Առողջապահական	նվազ խոցելի	2,699	Ավարտված
41.	Կոտայք	TKQ-03	Մարմարիկի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում	Խմելու ջուր	խիստ խոցելի	1,300	Շինաշխատանքներ
42.	Կոտայք	TKQ-04	Զովաշենի խմելու ջրի ՕԿԶ-ի կառուցում	Խմելու ջուր	խիստ խոցելի	177	Ավարտված
43.	Կոտայք	TKQ-05	Զառի խմելու ջրի ՕԿԶ-ի կառուցում, ջրընդունիչի վերակառուցում	Խմելու ջուր	խոցելի	1,534	Շինաշխատանքներ
44.	Կոտայք	TKQ-06	Գեղաղիի մանկապարտեզի մեկ մասնաշենքի վերակառուցում, ջեռուցման համակարգի կառուցում	Մանկապարտեզ	խիստ խոցելի	750	Ավարտված
45.	Կոտայք	TKQ-07	Չարենցավանի թիվ 3 մանկապարտեզի վերակառուցում	Մանկապարտեզ	խոցելի	990	Շինաշխատանքներ
46.	Կոտայք	TKQ-08	Աբովյանի թիվ 3 մանկապարտեզի վերակառուցում	Մանկապարտեզ	խոցելի	408	Վերջնական փորձաքննություն
47.	Կոտայք	TKQ-09	Ջրվեժ գ. տնամերձ հողամասերի ոռոգման համակարգի կառուցում	Ոռոգում	նվազ խոցելի	7,198	Նախնական փորձաքննություն
